ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

# ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՆԹԱՀԱՏՎԱԾ 1.
ՆՈՐԱԴՈՒԶ (ՀՐԱԶԴԱՆԻ ՋԷԿ – ԿԱՄՈ)

**Պայմանագիր՝ «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» 220կՎ օդային գծի բոլոր հինգ ենթահատվածների համար ՎԳՊ-ի իրականացման վերաբերյալ համապատասխանության հաշվետվության պատրաստում», թիվ.** HV-CS-3/2014

**Պատվիրատու՝ «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ**

**Պատրաստված է՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ կողմից**

**Ամսաթիվ՝ ՀՈւՆԻՍ** 24, 2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ամփոփագիր ........................................ 4
II. Ներածություն ........................................ 5
Ծրագրի ընդհանուր նկարագիրը ........................................ 5
ՎԳՊ նպատակները և շրջանակը ........................................ 5
Իրավական շրջանակ և իրավասություններ ........................................ 6
Մոնիտորինգ և գնահատում ........................................ 8
III. ԱՄ մեթոդաբանությունը ........................................ 9
IV. ՎԳՊ իրականացման ընթացակարգերը ........................................ 11
Ինստիտուցիոնալ կառուցվածք և կառավարում ........................................ 11
Հանրային քննարկումներ և իրազեկում ........................................ 12
Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ ........................................ 13
Փոխհատուցման տրամադրման գործընթաց ........................................ 14
Հարկադիր օտարում և ձեռնարկված միջոցներ ........................................ 15
V. Ազդեցության իրական շրջանակի որոշումը ........................................ 16
VI. Տրամադրված փոխհատուցման գնահատումը ........................................ 20
Փոխհատուցումը հողի մշտական կորստի դիմաց ........................................ 20
Փոխհատուցումը մշակաբույսերի դիմաց ........................................ 21
Փոխհատուցումը վարձակալների համար ........................................ 21
Փոխհատուցումը չձևակերպված օգտագործողների համար ........................................ 22
Փոխհատուցումը սոցիալապես խոցելի խմբերի համար ........................................ 22
Փոխհատուցումը «խիստ ազդեցության» համար ........................................ 23
VII. ՎԳՊ իրականացման բյուջեի ամփոփումը ........................................ 24
VIII. Հանրային գոհունակությունը ........................................ 25
IX. Եզրակացություններ և առաջարկություններ ........................................ 29
X. Հավելվածներ ........................................ 31
Հավելված Ա. Համապատասխանության գնահատման հետազոտության հարցաթերթ ........................................ 31
Հավելված Բ. Ազդեցության ենթակա հողերը և փոխհատուցումը ........................................ 36
Հավելված Գ. ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման մասին ........................................ 37
Հավելված Դ. 1-ին ենթահատվածում բողոքների գրանցման աղյուսակ (անգլերենով) ........................................ 38
Հավելված Ե. ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում մշակաբույսերի փոխհատուցման վերաբերյալ ........................................ 39

## Օգտագործված հապավումներ

| | |
|---|---|
| ԱԵԱ | Ազդեցության ենթարկված անձ |
| ԱՏՏ | Ազդեցության ենթարկված տնային տնտեսություն |
| ԱՄ | Արտաքին մոնիտորինգ |
| ԱՎԾ | Ազգային վիճակագրական ծառայություն |
| ԲԷՑ | Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր ՓԲԸ |
| ԲԿՄ | Բողոքների կարգավորման մեխանիզմ |
| ԲՍԱԳ | Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում |
| ԲԿՀ | Բողոքների կարգավորման հանձնաժողով |
| ԳՔ | ՀԲ-ի գործառնական քաղաքականության |
| ԴՊ | Դժվարանում եմ պատասխանել |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՔ | Հանրային քննարկում |
| ՀՔՀՊ | Հանրային քննարկման և հրապարակման պլան |
| ՎԳՊ | Վերաբնակեցման գործողության պլան |
| ՎՔՇ | Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ |
| ՏԶՀԿ | Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC) |
| ՏԻՄ | Տեղական ինքնակառավարման մարմիններ |
| ՏՏ | Տնային տնտեսություն |
| ՕԳ | Օդային գիծ |

# I. Ամփոփագիր

- Սույն «Համապատասխանության հաշվետվությունը» մշակվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագրի «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» էլեկտրահաղորդման օդային գծի 1-ին ենթահատվածի ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգի արդյունքում:
- 1-ին ենթահատվածում Ծրագիրն ազդել է 11 համայնքների 45 մասնավոր հողակտորների (14,775մ$^2$) սեփականատերեր 91 տնային տնտեսությունների վրա, համայնքային հողերի 1 վարձակալ և 1 ապօրինի օգտագործող ԱՏՏ-ների վրա:
- 42 մասնավոր հողակտորների օտարման գործընթացն ավարտվել է: Արդյունքում փոխհատուցվել են հողի մշտական կորստի դիմաց 87 ԱՏՏ-ներ: 3 մասնավոր հողակտորի օտարումը կավարտվի և դրանց դիմաց 6 ԱՏՏ-ներ փոխհատուցում կստանան դատական քննության ավարտից հետո՝ երբ կորոշվեն նշված հողերի օրինական սեփականատերերը: Այնուհանդերձ, ԲԷՑ-ը տվյալ հողերի օտարման համար համապատասխան փոխհատուցման գումարը փոխանցել է դատարանի դեպոզիտային հաշվին:
- Նշված դատական քննության ավարտը թույլ կտա նաև ավարտել մշակաբույսերի դիմաց փոխհատուցման տրամադրումը: Սեփականության իրավունքի ճանաչմանը հավակնող վերը նշված 6 ԱՏՏ-ներից 1-ը ենթակա է փոխհատուցման մշակաբույսերի կորստի համար: Սակայն, ԲԷՑ-ը օրինական հիմք չի ունեցել տվյալ ԱՏՏ-ին վճարելու մշակաբույսի դիմաց փոխհատուցումը: Դրա պատճառով, մշակաբույսերի դիմաց փոխհատուցման ենթակա 30 ԱՏՏ-ներից ՎԳՊ դրույթներին համաձայն փոխհատուցվել են 29-ը: ԲԷՑ-ը պարտավորվում է դատարանի վճռից հետո, երբ կճանաչվեն այդ 1 ԱՏՏ-ի սեփականության օրինական հիմքերը, 3 օրյա ժամկետում վճարել մշակաբույսերի դիմաց փոխհատուցման գումարը: Դրա համար հիմք է հանդիսանում ԲԷՑ-ի ղեկավարության համապատասխան գրությունը (տե՛ս Հավելված Ե. «ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում մշակաբույսերի փոխհատուցման վերաբերյալ»):
- Վարձակալ 1 ԱՏՏ-ն և ապօրինի օգտագործող 1 ԱՏՏ-ն փոխհատուցվել են:
- Սոցիալապես խոցելի բոլոր ԱՏՏ-ները փոխհատուցվել են:
- «Խիստ ազդեցության» դեպքերը 1-ին ենթահատվածում 2-ն են: Բոլոր 2 ԱՏՏ-ների փոխհատուցումը համապատասխանում է ՎԳՊ-ին:
- 1-ին ենթահատվածում չկան բիզնեսի, աշխատատեղի, շենքերի և շինությունների, ծառերի կորստի և ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր:
- ՎԳՊ իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքը և կառավարումը, հողերի օտարման և փոխհատուցման տրամադրման գործընթացները, հանրային իրազեկման և խորհրդատվության գործընթացները համապատասխանում են նախատեսվածին:
- Բողոքարկման մեխանիզմները և Բողոքների կարգավորման հանձնաժողովը գործում են: ԱՏՏ-ների կողմից ստացվել են գրավոր և բանավոր բողոքներ: ԲԷՑ-ի կողմից իրականացվել են անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի ԱՏՏ-ները տեղեկացված լինեն բողոքարկման մեխանիզմների և համապատասխան կոնտակտային անձի վերաբերյալ:
- ԱՏՏ-ների գոհունակության մակարդակն ընդհանուր առմամբ բարձր է:

- **Այսպիսով, ըստ արտաքին մոնիտորինգի արդյունքների, 1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման միջոցառումներն ու գործընթացները համապատասխան են: Բոլոր ԱՏՏ-ները ստացել են համապատասխան փոխհատուցում՝ բացառությամբ դատական քննության ընթացքում գտնվող մշակաբույսի դիմաց փոխհատուցման ենթակա 1 ԱՏՏ-ի:**
- **ԲԷՑ-ը պարտավորվում է դատարանի վճռից հետո, երբ կճանաչվեն այդ ԱՏՏ-ի սեփականության օրինական հիմքերը, 3 օրյա ժամկետում վճարել մշակաբույսերի դիմաց փոխհատուցման գումարը:**

# II. Ներածություն

## Ծրագրի ընդհանուր նկարագիրը

«Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԲԷՑ) իրականացնում է Հայաստանի 4 մարզերի վարչական տարածքով անցնող շուրջ 230 կմ երկարությամբ «Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1» էլեկտրահաղորդման օդային գծի (այսուհետ՝ նաև ՕԳ) վերանորոգում: Դա իրականացվում է ցանցի հուսալիությունը բարձրացնելու, գծի թողունակությունը ավելացնելու և Հայաստանում էներգամատակարարման բացը լրացնելու նպատակով: Ծրագիրը ֆինանսավորվում է Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկային միջոցներով:

Ծրագիրը նախատեսում է ամբողջովին վերափոխել Հրազդանի ՋԷԿ-ից մինչև Շինուհայրի ենթակայան ձգվող բարձրավոլտ գիծը, մոնտաժել նոր հենասյուներ, փոխարինել և նորացնել էլեկտրահաղորդման լարերը, մեկուսիչները և այլ առանցքային ենթակառուցվածքները:

Նոր ՕԳ-ն ամբողջությամբ չի գտնվելու գոյություն ունեցող ՕԳ-ի անվտանգության գոտու սահմաններում, ուստի հողակտորների և հողօգտագործման վրա մշտական ազդեցության դեպքերում առաջանում է հողի ձեռքբերման անհրաժեշտություն: Հողի ձեռքբերումը պահանջվում է հենարանների հիմքերի շինարարության համար: Այն դեպքերում, երբ նոր ՕԳ անվտանգության գոտում հայտնվեն տներ և չբավարարվեն անվտանգ հեռավորության նվազագույն պահանջները, կառաջանա նաև վերաբնակեցման անհրաժեշտություն:

Ծրագիրն իրականացվում է 5 առանձին ենթահատվածներով: Յուրաքանչյուր ենթահատվածի համար պետք է մշակվի և իրականացվի Վերաբնակեցման գործողությունների պլան (ՎԳՊ)՝ համաձայն ՀՀ օրենսդրության և ՀԲ-ի Գործառնական քաղաքականության 4.12 ձեռնարկի (այսուհետ՝ ՀԲ ԳՔ ձեռնարկ): Ստորև աղյուսակում ներկայացվում են Ծրագրի իրականացման համար առանձնացված 5 ենթահատվածները:

**Աղյուսակ 1. Ծրագրի ենթահատվածները**

| Ենթահատված | Երկարություն | Նախատեսվող հենասյուների քանակ |
|---|---|---|
| **Ենթահատված 1. Նորադուզ (Հրազդանի ՋԷԿ – Կամո)** | **45 կմ** | 129 |
| **Ենթահատված 2. Լիճք (Կամո – Լիճք)** | **25 կմ** | 66 |
| **Ենթահատված 3. Վարդենիս (Լիճք – Եղեգնաձոր)** | **45 կմ** | 163 |
| **Ենթահատված 4. Վայք (Եղեգնաձոր – Սպանդարյան ՀԷԿ)** | **70 կմ** | 243 |
| **Ենթահատված 5. Որոտան 1 (Սպանդարյան ՀԷԿ – Շինուհայր)** | **40 կմ** | 108 |

**Աղբյուրը՝ 1-ին ենթահատվածի ՎԳՊ**

## ՎԳՊ նպատակները և շրջանակը

ՎԳՊ-ի հիմնական նպատակը Ծրագրի ազդեցությանը ենթարկված անձանց հայտնաբերելն ու աջակցելն է՝ նրանց կյանքի որակը և կենսակերպը վերականգնելու և առնվազն մինչ-Ծրագրային մակարդակ հասցնելու համար:

Ծրագրի 1-ին ենթահատվածի համար (Հրազդանի ՋէԿ – Կամո հատված) համապատասխան ՎԳՊ-ն հաստատվել է 2015-ի հունվարին, որի հայերեն և անգլերեն տարբերակները հասանելի են ԲԷՑ-ի ինտերնետային կայքում (http://hven.am/ հայտարարություններ/իրազեկումներ/):

Չնայած Ծրագրի իրականացման արդյունքում 2 ԱԵՏՏ կորցրել են իրենց արտադրողական ակտիվների ավելի քան 10 տոկոսը՝ 1-ին ենթահատվածում Ծրագրի ազդեցությունը համարվում է փոքր[1], ուստի պատշաճ կերպով մշակվել է համառոտ ՎԳՊ:

Հաստատված ՎԳՊ-ն ներառում է հողի, շենքի/շինության, մշակաբույսերի և ծառերի, եկամուտների, բիզնեսի և աշխատատեղի մշտական կամ ժամանակավոր կորստի դեպքերում ազդեցության ենթարկված անձանց (այսուհետ՝ նաև ԱԵԱ) իրավունքների շրջանակը, ինչպես նաև Ծրագրի խիստ ազդեցության, ֆիզիկական վերաբնակեցման և խոցելիության նպաստների մասին համապատասխան դրույթները:

Ազդեցության ենթարկված ակտիվների 100 տոկոս գույքագրման արդյունքում ՎԳՊ-ով որոշվել են փոխհատուցման ենթակա ակտիվների և եկամտի կորստի տեսակները և չափերը:

Ծրագրի ազդեցությունը ճշգրիտ կերպով գնահատելու համար իրականացվում են հետևյալ ուսումնասիրությունները.

1. Չափագրման ուսումնասիրություն, ըստ որի չափվել են ազդեցության ենթարկված հողային տարածքները, ինչպես նաև վնասված գույքի քանակն ու տեսակը,
2. Կորուստների գույքագրում, ըստ որի որոշվել և գնահատվել են հողերի և ձեռքբերման ենթակա գույքի բնութագրերը,
3. Վնասված գույքի փոխհատուցման արժեքի գնահատում, ըստ որի որոշվել է կորցրած գույքի, եկամտի, կենսամակարդակի այլ աղբյուրների և ծախսերի փոխհատուցման գումարը,
4. Մարդահամարի անցկացում, ըստ որի որոշվել է ազդակիր տնային տնտեսությունների և նրանց անդամների ճշգրիտ քանակը՝ ներառելով որոշ սոցիալական բնութագրեր (սեռ, էթնիկ պատկանելիություն, կրթություն, կենսամակարդակ և եկամուտի աղբյուրներ):

Այսպիսով, վերաբնակեցումը, փոխահատուցումը և բարեկեցության վերականգնումը պետք է իրականացվի համաձայն հաստատված ՎԳՊ-ի: ՎԳՊ-ն ներկայացնում է ազդեցության ենթակա անձանց նկարագիրը, կորուստների և ազդեցությունների չափը, փոխհատուցման և վերականգնման քաղաքականության շրջանակը, ՎԳՊ իրականացման ինստիտուցիոնալ և գործառնական մեխանիզմները, ՎԳՊ իրականացման ժամանակացույցը և բյուջեն, տեղեկատվության հրապարակման, հանրային քննարկումների և բողոքների կարգավորման մեխանիզմները և այլն:

ՎԳՊ իրականացումը 1-ին ենթահատվածում սկսվել է 2015-ի հունվարին և շարունակվել մինչև 2015-ի հունիս ամիսը: Հունիս ամսվա ընթացքում իրականացվել են նաև ճշգրտող միջոցառումներ:

## Իրավական շրջանակ և իրավասություններ

Վերաբնակեցման պլանավորման և իրականացման իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է և դրանից բխող համապատասխան ՀՀ օրենսդրական ակտերը: Քանի որ Ծրագիրն իրականացվում է միջազգային պայմանագրի շրջանակներում և ՀԲ-ի ռեսուրսներով, ուստի Ծրագրի իրակա-

[1] Համաձայն ՀԲ Գործառնական քաղաքականությունների (Operation Manual 4.12 , Revised April 2013) ազդեցությունը համարվում է փոքր է, եթե ազդակիր անձինք ֆիզիկապես չեն վերաբնակեցվում, չեն կրում արտադրողական ակտիվների ավելի քան 10 տոկոսի կորուստ, կամ ֆիզիկապես վերաբնակեցվում են 200-ից պակաս ազդակիր անձինք:

նացման իրավական շրջանակը ներառում է նաև ՀԲ-ի կողմից պարտադրված վերաբնակեցման քաղաքականության դրույթները:

ՀՀ-ում սեփականության ոչ կամավոր օտարումը (հասարակության ու պետության կարիքների համար) հնարավոր է միայն օրենքով սահմանված կարգով բացառիկ՝ գերակա հանրային շահի դեպքում: Օտարման հիմքերը, փոխհատուցման կարգը և այլ համապատասխան դրույթներ սահմանվում են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով: Ընդ որում, այն տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին սեփականության իրավունքով պատկանող սեփականության իրավունքի բոլոր օբյեկտների վրա:

«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման գործունեության իրականացման հիմունքները և կանոնակարգում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:

ՀՀ օրենսդրության և ՀԲ-ի քաղաքականության միջև առկա են որոշակի տարբերություններ: Մասնավորապես, ՀԲ ԳՔ 4.12 ձեռնարկը նախատեսում է փոխհատուցում և վերաբնակեցման աջակցություն նույնիսկ հողի սեփականության իրավունքի բացակայության պայմաններում: Բոլոր այն դեպքերում, երբ ՀԲ ԳՔ 4.12 ձեռնարկի պահանջներն ավելի խիստ են քան ՀՀ օրենսդրության պահանջները, պետք է կիրառվեն ԳՔ 4.12 ձեռնարկի պահանջները:

Այսպիսով, Ծրագրի ազդեցության արդյունքում փոխհատուցման ենթակա են.

1) հողի կորուստ ունեցող անձինք, որոնք հանդիսանում են հողի սեփականատեր, օրինականացման ենթակա անձ, վարձակալ կամ ապօրինի օգտագործող,
2) հողի վրա գտնվող շենքի/շինության, մշակաբույսերի, ծառերի և այլ օբյեկտների սեփականատերերը,
3) բիզնես եկամուտներ կամ աշխատավարձ ժամանակավոր կամ մշտապես կորցնողները:

Փոխհատուցման իրավունքը սահմանափակվում է կասեցման ամսաթվով: Ծրագրի 1-ին ենթահատվածի համար դա 2014 թվականի օգոստոսի 11-ն է, որը Մարդահամարի և Մանրամասն չափագրման հետազոտության սկսվելու օրն է:

Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի փոխհատուցման և վերականգնման համար տրամադրվող դրամական աջակցության հաշվարկը պետք է կատարվի ըստ ստորև բերված աղյուսակի:

**Աղյուսակ 2. Հողերի դիմաց դրամական փոխհատուցման հաշվարկը**

| Փոխհատուցման օբյեկտ/անձ | Հաշվարկ |
|---|---|
| Սեփական հողեր | Վերականգնման ծախս +15% |
| Համայնքային հողեր | Կադաստրային արժեք |
| Օրինականացման ենթակա հողօգտագործող | Վերականգնման ծախս+15% (օրինականացումից հետո) |
| Վարձակալներ վարձակալության մնացած տարիների համար | Մինչև 1 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.05 |
| | Մինչև 15 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.14 |
| | Մինչև 25 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.20 |
| | 25 տարի - (վերականգնման ծախս +15%) * 0.25 |
| Ոչ օրինական օգտագործող հողի օգտագործման անցած տարիների համար | Մինչև 1 տարի - վերականգնման ծախս *0.05 |
| | Մինչև 15 տարի - վերականգնման ծախս * 0.14 |
| | Մինչև 25 տարի - վերականգնման ծախս * 0.20 |
| | 25 տարի - վերականգնման ծախս * 0.25 |

**Աղբյուրը՝ 1-ին ենթահատվածի ՎԳՊ**

Ի լրումն վերը նշված դեպքերի՝ նախատեսվում են նաև խոցելիության համար լրացուցիչ

վերականգնողական միջոցառումներ: Մասնավորապես, ՎԳՊ-ով նախատեսվում է խոցելի տնային տնտեսություններին[2] 6 ամիս շարունակ լրացուցիչ վերականգնողական դրամական աջակցության տրամադրում՝ ամսական 50,000 ՀՀ դրամ:

Բացի այդ, գյուղատնտեսական հողի 10 տոկոս և ավել կորուստ կրած ԱՏՏ-ները, ինչպես նաև ֆիզիկապես վերաբնակեցված ԱՏՏ-ները (ներառյալ վերաբնակեցված վարձակալները) պետք է ստանան «խիստ ազդեցության» նպաստ:

Դրամական աջակցություն է նախատեսվում նաև ՎԳՊ-ի իրականացման հետ կապված փաստաթղթերի վճարների փոխհատուցման համար: Մասնավորապես, ԱԵԱ-ները կստանան ֆինանսական աջակցություն լիազորագրի ծախսերը հատուցելու համար. վճարները կկատարվեն Ծրագրի կողմից, որպես փոխհատուցման մի մաս:

## Մոնիտորինգ և գնահատում

ՎԳՊ-ի իրականացումը ենթակա է և՛ ներքին, և՛ արտաքին մոնիտորինգի: Ներքին մոնիտորինգը իրականացվում է ՎԳՊ իրականացնող միավորի կողմից:

Արտաքին մոնիտորինգն իրականացվում է անկախ խորհրդատուի կողմից: Այն ենթադրում է համապատասխանության ուսումնասիրությունների իրականացում և դրա հիման վրա յուրաքանչյուր ենթահատվածի համար «Համապատասխանության հաշվետվության» մշակում և ներկայացում:

Արտաքին մոնիտորինգի նպատակն է հավաստիանալ, որ փոխհատուցման ծրագիրն իրականացվել է Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի (ՎՔՇ), ՀԲ-ի ԳՔ 4.12 ձեռնարկի և ՎԳՊ դրույթներին համապատասխան, ըստ անհրաժեշտության՝ առաջ քաշել ճշգրտող միջոցառումներ ու առաջարկություններ:

«Համապատասխանության հաշվետվության» հաստատումը հիմք է ծառայելու տվյալ ենթահատվածում շինարարական աշխատանքների մեկնարկի թույլտվության համար:

Ծրագրի արտաքին մոնիտորինգն իրականացնում է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը» (այսուհետ՝ ՏԶՀԿ), որը հանրային ծրագրերի մոնիտորինգի և գնահատման աշխատանքներում մասնագիտացված անկախ հետազոտական կառույց է[3]:

Արտաքին մոնիտորինգի ուսումնասիրությունները ներառել են քանակական և որակական հետազոտության տարբեր մեթոդներ: Իրականացվել են դաշտային և գրասենյակային ուսումնասիրություններ: Սույն հաշվետվության հաջորդ բաժնում բերվում են արտաքին մոնիտորինգի մեթոդաբանության մանրամասները, իսկ հաջորդող բաժիններում ներկայացվում են արտաքին մոնիտորինգի արդյունքները և հիմնական եզրակացությունները:

[2] Ըստ ՎՔՇ-ի՝ խոցելի են համարվում հետևյալ ազդակիր տնային տնտեսությունները՝
- Անապահով ՏՏ, որոնք գրանցված են Ընտանեկան Նպաստների Համակարգում և ստանում են համապատասխան դրամական նպաստ,
- Միայնակ, այրի կամ ընտանիքի կերակրողին կորցրած կանանցից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա,
- Թոշակառուներից, տարեցներից բաղկացած տնտեսությունները, որտեղ թոշակառուից, ՀՀ զինված ուժերում ծառայողից, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամից կամ մինչև 23 տարեկան առկա համակարգում սովորող ուսանողից բացի այլ աշխատունակ տարիքի անձ չկա:

[3] Կենտրոնի մասին մանրամասների համար տես՝ www.EDRC.am

# III. ԱՄ մեթոդաբանությունը

Արտաքին մոնիտորինգի (այսուհետ՝ նաև ԱՄ) շրջանակներում իրականացված ուսումնասիրություն-ների մեթոդաբանության ընտրության և իրականացման համար հիմք են ծառայել ներկայացված տեխնիկական առաջադրանքը, ՎԳՊ դրույթները և համաձայնեցված տեխնիկական առաջարկը: Համապատասխանության ուսումնասիրությունը ներառել է քանակական և որակական հետազոտության խառը մեթոդներ: Իրականացվել են գրասենյակային և դաշտային ուսումնասիրություններ:

Տվյալների հավաքման համար կիրառվել են մասնավորապես 3 հիմնական մեթոդներ.

- Տվյալների բազաների վերլուծություն և փաստաթղթերի քննություն,
- Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
- ԱՏ-ների հետ հարցազրույցներ:

Գրասենյակային ուսումնասիրությունների ընթացքում ՏԶՀԿ աշխատանքային խումբը հավաքագրել և համադրել է անհրաժեշտ տեղեկատվությունը, ուսումնասիրել, քննել է ֆինանսական և ոչ ֆինանսական ծրագրային փաստաթղթերը (ներառյալ՝ ՎՔԾ, ՀԲ-ի ԳՔ 4.12 ձեռնարկ, ՎԳՊ), վերլուծվել են առկա տվյալների բազաները:

Մասնավորապես, հիմնական ուսումնասիրության առարկա են դարձել հետևյալ փաստաթղթերը.

- **Նկարագրության արձանագրությունները**, որոնք ներառում են ազդեցության ենթարկված ակտիվների նկարագրությունը, այն է՝ հողակտորների, մշակաբույսերի, ծառերի, շենք-շինությունների և այլ անշարժ գույքի, բիզնեսի նկարագրությունը:
- **Գնահատման հաշվետվությունները**, որտեղ արտոնագրված գնահատողների կողմից ներկայացվում են օտարման ենթակա ակտիվների գնահատման արդյունքները:
- **Սեփականության օտարման մասին պայմանագրերը**, որտեղ նշվում են օտարվող հողակտորի ծածկագիրը, մակերեսը, փոխհատուցման չափը, սեփականատերերը և այլն:
- **Ազդակիր անձանց լրացուցիչ փոխհատուցման մասին համաձայնագրերը**, որտեղ նշվում են փոխհատուցման հիմքերը, չափը և այլն:
- **Վճարման հանձնարարագրերը**, որտեղ նշվում են փոխհատուցման նպատակը, ամսաթիվը, գումարի չափը, ստացողի տվյալները:
- **Ներքին մոնիտորինգի հաշվետվությունները**. ԲԷՑ-ի կողմից տրամադրվել է մեկ հաշվետվություն[4]:

Վերլուծվել են առկա տվյալների բազաները և համեմատվել ծրագրային մյուս փաստաթղթերում ազդեցության և ազդակիրների վերաբերյալ տեղեկատվության հետ:

Բոլոր պայմանագրերի, համաձայնագրերի և վճարումը հավաստող փաստաթղթերի առկայության հետ մեկտեղ, ստուգվել է դրանցում նշված տեղեկատվության համադրելիությունը և համապատասխանությունը, մասնավորապես (1) բոլոր սեփականատերերի ստորագրության առկայությունը, (2) հողի դիմաց փոխհատուցման և լրացուցիչ փոխհատուցման համապատասխա-նությունը, (3) բանկային հաշվեհամարների համապատասխանությունը, (4) փաստաթղթերի

[4] Monthly Supervision Report 5, 2015 (as of June 9, 2015):

վավերականացման (գործողությունների իրականացման) ամսաթվերի համապատասխանությունը գործող կարգին (իրականացման ժամանակացույցին):

Ուսումնասիրությունները ներառել են նաև հանրային լսումների և խորհրդատվության, բողոքարկման, ինստիտուցիոնալ կազմակերպման, փոխհատուցման հաշվարկման և վճարման գործընթացները:

Մոնիտորինգի ընթացքում հարցազրույցներ են իրականացվել հիմնական իրազեկ անձանց հետ, որոնք ներառել են Ծրագրի հիմնական աշխատակիցներին, պաշտոնյաներին և խորհրդատու-ներին, ՏԻՄ ներկայացուցիչներին, ինչպես նաև տարածաշրջանում գործող ՀԿ-ներին:

Նախօրոք մշակված հարցաթերթի հիման վրա, կազմակերպված կերպով, 1-ին ենթահատվածի բոլոր ազդակիր տնային տնտեսությունների հետ իրականացվել են հարցազրույցներ, արդյունքները մուտքագրվել են տվյալների բազա և վերլուծվել:

Տարբեր աղբյուրներից ստացված տվյալները և տեղեկատվությունը վերլուծվել ու համադրվել են, որը թույլ է տվել գնահատել գործընթացը, հավաստիանալ և փոխստուգել փոխհատուցման ստացման փաստը, ինչպես նաև բացահայտել առկա խնդիրները և բացերը:

Կիրառված մեթոդաբանությունը և ստացված ԱՄ արդյունքները թույլ են տվել եզրակացնել տվյալների հավաստիության, տեղեկատվության ամբողջականության և ճշգրտության վերաբերյալ, ինչպես նաև փոխհատուցման ծավալների համապատասխանության և գործընթացի արդյունավետության մասին:

Մշակվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ: Մոնիտորինգի արդյունքները արտահայտված են սույն Համապատասխանության հաշվետվությունում:

# IV. ՎԳՊ իրականացման ընթացակարգերը

## Ինստիտուցիոնալ կառուցվածք և կառավարում

Ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը ներառում է մի շարք կազմակերպություններ և կառույցներ, որոնց դերակատարումը և պատասխանատվության շրջանակը մանրամասն ներկայացված են ՎԳՊ-ում: ԲԷՑ-ը Ծրագրի իրականացման անմիջական պատասխանատու է, որն ունի մի շարք խորհրդատուներ.

- Շինարար կապալառուն (Kalpataru Power Transmission Limited) պատասխանատու է ՎԳՊ-ի կազմման համար՝ ներառյալ չափագրումները, նկարագրման արձանագրությունների կազմումը, հանրային քննարկումների կազմակերպումը և տեղեկատվության հրապարակումը, ծրագրի և հենարանների տեղակայման վայրի որոշումը:
- ՎԳՊ իրականացմանն աջակցող խորհրդատուն (Hifab OY & Energy Advisory) պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության համար և պետք է երաշխավորի դրանց համապատասխանությունը Ծրագրի հաստատված ծրագրին, սոցիալական և բնապահպանական պահանջներին, որի համար հաշվետվություններ է ներկայացնելու շինարարության ամբողջ ընթացքում:
- Արտաքին մոնիտորինգի իրականացման անկախ խորհրդատուն (EDRC) պատասխանատու է ՎԳՊ իրականացման արտաքին մոնիտորինգի և Համապատասխանության հաշվետվության ներկայացման համար:

ՎԳՊ-ով նախատեսվում է, որ ԲԷՑ-ում պետք է կազմավորվի 5 մասնագետից բաղկացած հատուկ խումբ՝ Իրականացնող միավոր[5]: Այն պատասխանատու է վերաբնակեցման իրականացման և ներքին մոնիտորինգի համար, երաշխավորում է ԱԵԱ-ների արագ և պատշաճ ծանուցումը, պայմանագրերի ստորագրման գործընթացի կազմակերպումը և ԱԵԱ-ներին աջակցությունը, հարկադիր օտարման գործընթացի կազմակերպումը, ԱԵԱ-ների գույքի գրանցումն ու վերագրանցումը, բողոքների գրանցումը և համակարգումը:

Այնուհանդերձ, իրականացման փուլում որոշվել է Իրականացման միավորի որոշ գործառույթներ պատվիրակել արտաքին խորհրդատուներին: Մասնավոր հողակտորների ձեռքբերման աշխատանքներն իրականացրել է «Վ.Նիկողոսյան» ԱՁ-ն:

ԱԵԱ մարդահամարը, ազդեցության ենթարկված սեփականության գույքագրումն ու Գնահատման հաշվետվությունների պատրաստումն իրականացրել է «Ֆինափ» ՍՊԸ-ն:

Ծրագրի ինստիտուցիոնալ շրջանակը ներառում է նաև ՀՀ պետական մարմինները (համապատասխան նախարարություններ, մարզպետարաններ և Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե), ՏԻՄ-երը, Բողոքների կարգավորման հանձնաժողովը, տարածաշրջանում գործող ՀԿ-ները, նաև Համաշխարհային բանկը:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*ՎԳՊ իրականացման կառավարման համակարգում տեղի են ունեցել փոփոխություններ: Մասնավորապես, ԲԷՑ-ը սեփական միջոցներով վարձակալել է մասնագիտացված կազմակերպություն՝ հողերի ձեռքբերման պրոցեսին օժանդակելու համար: Վերջինս քննարկվել և համաձայնեցվել է ՀԲ-ի հետ (ՀԲ-ի Էներգետիկ առաքելության ընթացքում՝ 2015 թվականի հունվարի 26-31): Ինստիտուցիոնալ կառուցվածքը և կառավարումն համապատասխանում են ՎԳՊ դրույթներին:*

---

[5] ՎԳՊ Իրականացնող միավորը պետք է ունենա հետևյալ կազմը՝ խմբի ղեկավար, վերաբնակեցման 2 մասնագետ (անմիջապես դաշտում աշխատող), իրավաբան (ոչ լրիվ զբաղվածությամբ) և 2 մասնագետ (գրասենյակում աշխատող):

## Հանրային քննարկումներ և իրազեկում

Վերաբնակեցման գործողությունների պլանավորմանը, իրականացմանը և մոնիտորինգին ակտիվ մասնակցություն պետք է ունենան ԱԵԱ-ները: Այդ նպատակով կազմվել է Հանրային քննարկման և հրապարակման պլանը (ՀՔՀՊ), որի հիման վրա ԲԷՑ-ը Կապալառուի միջոցով իրականացնում է լայնածավալ հանրային քննարկումներ՝ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումների միջոցով: Այս քննարկումներին իրենց մասնակցությունը կարող են ունենալ նաև ազդակիր համայնքների ՏԻՄ ներկայացուցիչները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունները:

2014թ-ի օգոստոսին մշակվել է ՀՔՀՊ, որի նպատակն է հիմնել հանրային քննարկումների և տեղեկատվության տարածման գործուն ընթացակարգեր, մեխանիզմներ և սկզբունքներ: Հանրային քննարկումների (այսուհետ նաև՝ ՀՔ) և ԱԵԱ-ների իրազեկման պաշտոնական գործընթացը սկսվել է նախքան ՎԳՊ իրականացումը: Մասնավորապես, 2014 թվականի օգոստոսի 11-ից 15-ը հանրային քննարկումներ են կազմակերպվել 1-ին ենթահատվածի բոլոր համայնքներում:

Հանրային քննարկումներն անցկացվել են համայնքների ՏԻՄ գրասենյակներում: Բոլոր ԱՏՏ-ները նախօրոք տեղեկացվել են ՀՔ իրականացման տեղի և ժամի վերաբերյալ: ՀՔ-ների թեմաներն ընդգրկել են ՎԳՊ մշակման, իրականացման և փոխհատուցման հարցերը՝ ներառյալ Նախնական ուսումնասիրությունների սկզբի մասին ՀՀ կառավարության որոշումը[6], ինչպես նաև Մանրամասն չափագրման հետազոտության իրականացումը:

ՀՔ-ներին մասնակցել են Ծրագիրն իրականացնող կազմակերպության, նախագծող և գնահատող խորհրդատուների ներակայացուցիչները, սոցիալական և վերաբնակեցման հարցերով մասնագետը: ԱԵԱ-ներին տրամադրվել են ԲԷՑ-ի և Խորհրդատուի կոնտակտային տվյալները՝ լրացուցիչ հարցերի և խորհրդատվության համար:

Ոչ պաշտոնական հանրային քննարկումներ ԱԵԱ-ների և ՏԻՄ-երի հետ իրականացվել են չափագրման, գույքագրման և մարդահամարի անցկացումից առաջ և ընթացքում: ՎԳՊ իրականացման ընթացքում ոչ պաշտոնական քննարկումները շարունակվել են հատկապես պայմանագրերի ստորագրման շրջանում: Մասնավորապես, իրականացվել է խորհրդատվություն ԱԵԱ բարձրացված հարցադրումների և հնարավոր խնդիրների շուրջ: Մտահոգության հիմնական պատճառը շինարարական աշխատանքների ընթացքում դեպի շինհրապարակ երթուղիների հասանելիությունն ու դրա հետևանքով առաջացած համապատասխան վնասն է (մշակաբույսերի ժամանակավոր կորուստ):

ԱԵԱ-ներին իրավաբանական և կազմակերպչական հարցերում տրամադրվել է խորհրդատվություն և աջակցություն: Մասնավորապես, մահացած սեփականատերերի դեպքում կարգավորվել է ժառանգության իրավունքի վերականգնման գործընթացը: Սեփականատիրոջ երկրից բացակայելու դեպքերում կարգավորվել է լիազորագրի տրամադրման գործընթացը: ԱՄ-ն չունի այս դեպքերի և համապատասխան ԱՏՏ-ների ճշգրիտ քանակը: Այս տեղեկատվությունը չի արձանագրվել իրականացնող կազմակերպության կողմից:

Տեղեկատվության տարածման շրջանակներում իրականացված գործողություններն են. (1) ՀՀ օրենքով նախատեսված ծանուցումների տրամադրումը ԱԵԱ-ներին (նկարագրության արձանագրություն, պայմանագրի նախագիծ), (2) հանրային տեղեկատվական գրքույկի տրամադրումը, (3) ՎՔԾ հրապարակումը, (4) ՎԳՊ նախագծի և վերջնական ՎԳՊ հրապարակումը: Նկարագրության

[6] Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրամատակարարման հուսալիություն» վարկային ծրագրի շրջանակներում «Հասարակության և պետության կարիքների համար օտարման ենթակա սեփականության նախնական ուսումնասիրության մասին» ՀՀ կառավարության N599-Ն որոշում, առ 12 հունիսի 2014թ.

արձանագրությունը ԱԵՏ-ներին առաքվել է փոստով, իսկ ինֆորմացիոն գրքույկները բաժանվել են հանրային իրազեկման միջոցառումների ժամանակ:

ՎԳՊ-ում հիշատակվում են «Բլյան» ՀԿ, «Արժանապատիվ Ապագա» ՀԿ և Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ «Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ, ինչպես նաև Գավառ Օրհուս կենտրոնը՝ որպես 1-ին ենթահատվածի տարածաշրջանում ակտիվ գործող կազմակերպություններ: Արտաքին մոնիտորինգի արդյունքներով, նշվածներից միայն 2-ն են տեղեկացված եղել հանրային լսումների մասին (Գավառ Օրհուս կենտրոնը և «Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ): Սակայն, միայն Գավառ Օրհուս կենտրոնն է մասնակցել հանրային իրազեկման միջոցառմանը (Գավառում): Մյուս կազմակերպությունները որևէ կերպ մասնակից չեն դարձել գործընթացին:

Ծրագրի իրականացման հետագա փուլերի մասին մյուս ՀԿ-ներն ընդհանրապես տեղյակ չեն, բացառությամբ այն փաստի, որ Սևան ազգային պարկում նախատեսվող անտառահատումների դեմ որոշակի քաղաքացիական նախաձեռնություններ են արվել: Այնուհանդերձ, այդ տարածքները ունեն պետական կամ համայնքային պատկանելիություն և չեն հանդիսանում սույն ուսումնասիրության առարկան:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*Իրականացված գործընթացներն համապատասխանում են նախատեսվածին: Ցանկալի է ՀԿ-ների դերի և մասնակցության առավելագույն ընդլայնում: Մասնավորապես, ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը կարող է տարածվել առավել մեծ թվով ՀԿ-ների շրջանում (անկախ դրանց իրավաբանական հասցեից), ծրագրի տեղեկատվական բուկլետները կարող են առցանց տարածվել ՀԿ-ների ցանցերի միջոցով (օրինակ՝ Օքսֆամի Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցը, Հանրային Ցանցը և այլն)՝ հրավիրելով ցանցի անդամներին աջակցել ԱԵԱ-ների իրազեկվածության և իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը:*

## Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ

ՎԳՊ-ի իրականացմանը վերաբերվող տարաձայնությունների և բողոքների արդյունավետ և արագ լուծման նպատակով մշակվել է Բողոքարկման մեխանիզմ (ԲՄ), որը ներկայացվել է հանրային քննարկումների ընթացքում: Այն ներկայացված է նաև Ծրագրի տեղեկատվական գրքույկում:

Բողոքարկման մեխանիզմը ներառում է 3 փուլ: Սկզբնական փուլում փորձ է արվում բողոքները լուծել համայնքի մակարդակով: Դիմում-բողոքները ընդունում է տվյալ համայնքում լիազորված անձը և փոխանցում ԲԷՑ-ի բողոքարկման համակարգողին: ԱԵԱ-ը կարող է նաև անձամբ դիմել ԲԷՑ-ի բողոքարկման համակարգողին, որի կոնտակտային տվյալները տրամադրվել են ՀՔ ժամանակ[7]: Բողոքի պատասխանը ներկայացվում է առավելագույնը 15 օրվա ընթացքում:

Եթե բողոքը շարունակվում է, ապա դիմում-բողոքը ներկայացվում և քննարկվում է Բողոքների կարգավորման հանձնաժողովում, որում ընդգրկված են նաև մարզի և, կամ համայնքի ներկայացուցիչներ և ՀԿ-ներ: Բողոքների կարգավորման երկրորդ փուլի ձախողման դեպքում ԱԵԱ-ը դիմում է դատարան:

[7] Բողոքարկման համակարգողի տվյալները նշված են Ծրագրի տեղեկատվական գրքույկում:

Սոցիալապես խոցելի ԱԵԱ-ները, ըստ պահանջի, կարող են աջակցություն ստանալ նաև սոցիալական աշխատողի կամ իրավաբանի կողմից: Այնուհանդերձ նման որևէ դիմում չի եղել՝ դրանք արձանագրված չեն Ներքին մոնիտորինգի հաշվետվության մեջ [8]:

1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման արդյունքներով ստացվել են 18 գրավոր դիմումներ և 8 հարցադրումներ: Դրանց բովանդակությունը ներկայացված է Ներքին մոնիտորինգի հաշվետվու-թյունում (բովանդակության և պատասխաններին ծանոթանալու համար, տե՛ս Հավելված Դ): Բոլոր 18 գրավոր դիմում/բողոքները վերաբերել են սեփականատերերի ցանկությանը օտարել տնտեսական և գործառնական նշանակությունը կորցրած հողերի մնացած հատվածը: Բողոքները քննվել են ԲԷՑ-ում և բավարարվել է:

Մյուս 8 հարցադրումները պատշաճ կերպով ստացել են իրենց պատասխանները ԲԷՑ բողոքարկման համակարգողի կողմից (տե՛ս Հավելված Դ): 6 ԱԵԱ-ներ խնդրել են իրենց բացատրել փոխհատուցման հաշվարկման մեթոդը, իսկ 1 ԱԵԱ՝ սոցիալապես խոցելի հանդիսանալու սկզբունքները, որոնք և ներկայացրել է բողոքարկման համակարգողը: 1 ԱԵԱ ցանկություն է հայտնել Ծրագրում աշխատելու որպես վարորդ. իր կոնտակտային տվյալները փոխանցվել են շինարար կապալառու (Kalpataru Power Transmission Limited) կազմակերպությանը:

Արտաքին մոնիտորինգի շրջանակներում իրականացված հարցազրույցների արդյունքների համաձայն գրավոր բողոք/դիմումներ ներկայացրած ԱՏՏ-ները բավարարված են:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*Բողոքարկման մեխանիզմները և Բողոքների կարգավորման հանձնաժողովը ձևավորված են: ԱԵԱ-ները հանրային քննարկումների ընթացքում տեղեկացվել են բողոքարկման մեխանիզմների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, պաշտոնական ծանուցման երկու փուլերում էլ ներկայացվել է այն անձի կոնտակտային տվյալները, ում ԱԵԱ-ները կարող են դիմել մտահոգիչ հարցերի և բողոքների առկայության դեպքում: Բողոքարկման մեխանիզմների և համապատասխան կոնտակտային անձի վերաբերյալ տեղեկատվությունը նաև հասանելի է ծրագրի բուկլետներում:*

*1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման արդյունքներով ստացվել են 18 գրավոր բողոք/դիմումներ և 8 հարցադրումները: Դրանց տրվել են պատշաճ պատասխաններ, ԱՏՏ-ները բավարարված են:*

## Փոխհատուցման տրամադրման գործընթաց

Փոխհատուցման վճարումը նախատեսված է, որ պետք է կատարվի առքուվաճառքի պայմանագրերի և լրացուցիչ փոխհատուցման համաձայնագրերի ստորագրումից հետո 15 օրվա ժամկետում: Գումարը պետք է փոխանցվի ԱԵԱ-ների բանկային հաշվին: Ընդ որում, ՎԳՊ-ի դրույթների համաձայն, եթե ԱԵԱ-ն չունի բանկային հաշիվ, ապա Ծրագրի շրջանակներում նրա համար պետք է բացվի բանկային հաշիվ:

Փաստացի փոխհատուցման տրամադրումն իրականացվել է ԱԵԱ բանկային հաշիվներին ուղղակի փոխանցման կամ Հատուկ միասնական բանկային հաշվին փոխանցման միջոցով:

[8] ՎԳՊ ներքին մոնիտորինգի և ԲՍԱԳ համապատասխանության համար պատասխանատուն՝ ՎԳՊ իրականացմանն աջակցող և շինարարական աշխատանքները վերահսկող խորհրդատուն է:

Արտաքին մոնիտորինգի աշխատանքների ընթացքում պարզվել է, որ իրականացման փուլում չի փոխհատուցվել վարձակալ ԱՏՏ-ն, 8 սեփականատեր ԱՏՏ-ներ չեն փոխհատուցվել մշակաբույսերի համար, 1 ԱՏՏ-ի լիազորագրի ծախսերը և 1 աղքատ ԱՏՏ-ի խոցելիության նպաստը և: Այդ կապակցությամբ իրականացվել են ճշգրտող միջոցառումներ:

Արդյունքում, փոխհատուցման վերջին վճարումն իրականացվել է 2015-ի հունիսի 23-ին:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***
*Իրականացված ճշգրտող միջոցառումների արդյունքում փոխհատուցման գործընթացն համապատասխանում է ՎԳՊ դրույթներին: Փոխհատուցման վերջին վճարումն իրականացվել է 2015-ի հունիսի 23-ին:*

## Հարկադիր օտարում և ձեռնարկված միջոցներ

Այն դեպքերում, երբ սեփականատերը հրաժարվում է պայմանագիրը ստորագրելուց, սկսվում է հարկադիր օտարման գործընթացը: Հարկադիր օտարումները պետք է կիրառվեն միայն բացառիկ դեպքերում, երբ ԱԵԱ-ի և ԲԷՑ-ի միջև բանակցությունները ձախողվել են: ԲԷՑ-ը պետք է նախաձեռնի օրենքով սահմանված պատշաճ դատական գործընթաց: ՎԳՊ-ն չի կարող համարվել իրականացված, քանի դեռ չկա դատարանի որոշումը և դրա վերաբերյալ ազդակիր անձինք պատշաճ կերպով տեղեկացված չեն և ԲԵՑ-ը չի կատարել փոխհատուցման, վերականգնման գումարների փոխանցում դատարանի դեպոզիտային հաշվին:

Ծրագրի 1-ին ենթահատվածում հարկադիր օտարման դեպքեր չեն եղել:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***
*1-ին ենթահատվածում հարկադիր օտարման դեպքեր չեն գրանցվել:*

# V. Ազդեցության իրական շրջանակի որոշումը

Համաձայն հաստատված ՎԳՊ-ի՝ 1-ին ենթահատվածում Ծրագիրը կազդի 2 քաղաքային և 12 գյուղական համայնքների 35,426մ² տարածքով թվով 169 հողակտորների վրա: Դրանցից 49 հողակտորները մասնավոր սեփականություն են, 114 հողակտորները համայնքի սեփականությունն են, 3-ը՝ պետական են, իսկ 3-ը՝ չունեն գրանցված սեփականատեր (տե՛ս աղյուսակ 3): Բոլոր մասնավոր հողակտորները չոռոգվող գյուղատնտեսական հողեր են, որոնք սեփականատերերն օգտագործում են գյուղատնտեսական նպատակներով և, հետևաբար, ենթակա են փոխհատուցման որպես գյուղատնտեսական հողեր: Չգրանցված հողակտորներից 2-ը չեն օգտագործվում, մինչդեռ 1-ը՝ գյուղատնտեսական նպատակներով օգտագործվում է՝ առանց համապատասխան գրանցման:

**Աղյուսակ 3. 1-ին ենթահատվածում ազդեցության ենթարկված հողերն ըստ սեփականության իրավունքի**

| | Մասնավոր | | Համայնքային | | Պետական | | Չգրանցված | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հող N | Մակերես մ² | Հող N | Մակերես մ² | Հող N | Մակերես մ² | Հող N | Մակերես մ² | Հող N | Մակերես մ² |
| Քաղաքային համայնքներ | | | | | | | | | | |
| Հրազդան | 7 | 1,019 | 22 | 5,812 | - | - | - | - | 29 | 6,831 |
| Գավառ | - | - | 8 | 2,249 | - | - | - | - | 8 | 2,249 |
| **Ընդամենը** | 5 | 878 | 5 | 1,431 | 1 | 289 | 2 | 199 | 13 | 2,798 |
| Գյուղական համայնքներ | | | | | | | | | | |
| Դդմաշեն | 8 | 845 | 1 | 77 | - | - | - | - | 9 | 922 |
| Ծաղկունք | 2 | 530 | 1 | 241 | 2 | 562 | - | - | 5 | 1,332 |
| Գեղամավան | 7 | 1,375 | 2 | 328 | - | - | - | - | 9 | 1,703 |
| Վարսեր | - | - | 2 | 481 | - | - | - | - | 2 | 481 |
| Ծովազարդ | 4 | 878 | 12 | 2,443 | - | - | - | - | 16 | 3,320 |
| Լճափ | 1 | 171 | 8 | 1,448 | - | - | - | - | 9 | 1,619 |
| Բերդկունք | 1 | 273 | 1 | 273 | - | - | - | - | 2 | 545 |
| Հայրավանք | 1 | 34 | 7 | 1,644 | 1 | 255 | - | - | 9 | 1,933 |
| Լճաշեն | 5 | 794 | 22 | 5,485 | - | - | 2 | 324 | 29 | 6,603 |
| Չկալովկա | 1 | 261 | 9 | 1,637 | - | - | 1 | 88 | 11 | 1,986 |
| Նորաշեն | - | - | 6 | 1,415 | - | - | - | - | 6 | 1,415 |
| Նորատուս | 12 | 1,640 | 13 | 2,849 | - | - | - | - | 25 | 4,488 |
| **Ընդամենը** | 42 | 6,798 | 84 | 18,319 | 3 | 817 | 3 | 412 | 132 | 26,346 |
| **Ընդհանուրը** | 49 | 7,817 | 114 | 26,380 | 3 | 817 | 3 | 412 | 169 | 35,426 |

**Աղբյուրը՝ 1-ին ենթահատվածի ՎԳՊ**

Արտաքին մոնիտորինգի ուսումնասիրության առարկա են հանդիսացել 50 հողակտորներ (այդ թվում՝ բոլոր մասնավոր սեփականություն հանդիսացող հողակտորները և առանց իրավունքի պետական գրանցման 1 հողակտորը): Արդյունքում, ըստ ՎԳՊ-ի՝ Ծրագիրն ազդել է 7,972մ² օտարման ենթակա ընդհանուր մակերեսով հողակտորների վրա, որի արդյունքում կան 100 ազդեցության ենթակա տնային տնտեսություններ:

Իրականացման փուլում տեղի են ունեցել ՎԳՊ ցուցանիշների փոփոխություններ: Օտարման ենթակա հողակտորների թիվը 3-ով նվազել է, իսկ օտարման մակերեսն ավելացել է 7,989մ²-ով՝ կազմելով 47 հողակտոր (այդ թվում՝ բոլոր մասնավոր սեփականություն հանդիսացող հողերը և 2 համայնքային սեփականություն հանդիսացող հողեր)՝ 15,961մ² ընդհանուր մակերեսով (տե՛ս աղյուսակ 4): Դա պայմանավորված է հետևյալով.

(i) ՎԳՊ իրականացման փուլում կադաստրային քարտեզների ճշգրտման արդյունքում Հրազդան համայնքում բացահայտվել է համայնքային հողի 1 վարձակալ ԱՏՏ (լոտ-կոդ 07-001-0883-0003, մինչև 25 տարի վարձակալության ժամկետով), իսկ Գավառ համայնքում

բացահայտվել է համայնքային հողի 1 ապօրինի օգտագործող ԱՏՏ (լոտ-կոդ 05-001-1134-0001, մինչև 15 տարի օգտագործման ժամկետով): Հետևաբար 2-ով ավելացել է հողակտորների և ԱՏՏ-ների թիվը, իսկ 1-ին ենթահատվածում օտարման ենթակա հողի մակերեսն ավելացել է 1,186 մ$^2$-ով:

(ii) Բավարարելով 8 համայնքների 18 սեփականատերերի պահանջը՝ օտարվել է տնտեսական և գործառնական նշանակությունը կորցրած հողի մնացած հատվածը, որը հանգեցրել է 1-ին ենթահատվածում օտարման ենթակա հողի մակերեսի 6,872 մ$^2$-ով ավելացմանը (տե՛ս «Բողոքներ և բողոքարկման մեխանիզմ» բաժինը):

(iii) ՎԳՊ իրականացման փուլում կադաստրային քարտեզների ճշգրտման արդյունքում փաստացի ազդակիր չեն ճանաչվել 5 հողակտորներ (տե՛ս Հավելված Գ «ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման մասին»): Հետևաբար 9-ով նվազել է ԱՏՏ-ների թիվը, իսկ օտարման ենթակա հողի մակերեսը նվազել է 69 մ$^2$-ով:

(iv) ՎԳՊ իրականացման փուլում հողի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցել է 1 ԱՏՏ, հետևաբար Լճաշեն համայնքի առանց պետական գրանցման 1 հողակտորը (լոտ-կոդ 05-040-0227-0021) դարձել է մասնավոր սեփականություն:

Արդյունքում, Ծրագիրն ազդում է նաև համայնքային հողի 1 չձևակերպված օգտագործողի և 1 վարձակալի վրա, որոնք երկուսն էլ ենթակա են փոխհատուցման՝ հողի օգտագործման և մշակաբույսերի կորստի համար: Այսպիսով, 1-ին ենթահատվածում հողերի վրա Ծրագրի ազդեցության իրական պատկերը ներկայացվում է աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4. 1-ին ենթահատվածում Ծրագրի ազդեցության իրական պատկերը հողերի և հողօգտագործողների վրա**

| Ցուցանիշը. Հողի մշտական կորուստ, վարձակալություն և ապօրինի օգտագործում | a. ՎԳՊ-ով պլանավորված | | | b. Իրականացման արդյունքներ | | | Տարբերություն (b-a) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հող N | Մակերես մ$^2$ | ԱՏՏ N | Հող N | Մակերես մ$^2$ | ԱՏՏ N | Հող N | Մակերես մ$^2$ | ԱՏՏ N |
| Մասնավոր հող | 49 | 7,818 | 99 | 45 | 14,775 | 91 | -4 | 6,957 | -8 |
| Համայնքից վարձակալված հող | 0 | 0 | 0 | 1 | 224 | 1 | 1 | 224 | 1 |
| Համայնքային հողի ապօրինի օգտագործող | 0 | 0 | 0 | 1 | 962 | 1 | 1 | 962 | 1 |
| Առանց պետ. գրանցման հող | 1 | 154 | 1 | 0 | 0 | 0 | -1 | -154 | -1 |
| Հրազդան | 7 | 1,019 | 21 | 7 | 1,623 | 19 (a) | 0 | 604 | -2 |
| Գավառ | 0 | 0 | 0 | 1 | 962 | 1 (b) | 1 | 962 | 1 |
| Դդմաշեն | 8 | 845 | 18 | 6 | 1,700 | 14 | -2 | 856 | -4 |
| Ծաղկունք | 2 | 530 | 4 | 2 | 530 | 4 | 0 | 0 | 0 |
| Գեղամավան | 7 | 1,375 | 17 | 7 | 3,126 | 17 | 0 | 1,751 | 0 |
| Ծովազարդ | 4 | 878 | 7 | 4 | 1,320 | 7 | 0 | 443 | 0 |
| Լճափ | 1 | 171 | 2 | 1 | 369 | 2 | 0 | 198 | 0 |
| Բերդկունք | 1 | 273 | 4 | 1 | 273 | 4 | 0 | 0 | 0 |
| Հայրավանք | 1 | 34 | 1 | 0 | 0 | 0 | -1 | -34 | -1 |
| Լճաշեն | 6 | 948 | 7 | 6 | 2,009 | 7 | 0 | 1,061 | 0 |
| Չկալովկա | 1 | 261 | 1 | 1 | 518 | 1 | 0 | 258 | 0 |
| Նորատուս | 12 | 1,640 | 18 | 11 | 3,531 | 17 | -1 | 1,891 | -1 |
| **Ընդամենը** 1-ին **ենթահատված** | 50 | 7,972 | 100 | 47 | 15,961 | 93 (a,b) | -3 | 7,989 | -7 |

Նշում. (a) Առկա է 1 վարձակալ; (b) առկա է 1 չձևակերպված օգտագործող:

**Աղբյուրը՝ ՏԶՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ**

Ըստ գործառնական նշանակության՝ բոլոր 45 մասնավոր հողակտորները գյուղատնտեսական նշանակության են, և բոլորը ենթակա են փոխհատուցման հաստատված ՎԳՊ դրույթներին համապատասխան: Փոխհատուցման են ենթակա նաև համայնքային հողի 1 ապօրինի (չձևակերպված) օգտագործողը, ինչպես նաև համայնքային հողի 1 վարձակալը:

Հաստատված ՎԳՊ-ով մշակաբույսերի կորստի դիմաց փոխհատուցման ենթակա էր 30 ԱՏՏ[9] (15 հողակտոր՝ 2,383մ²)։ Իրականացման փուլում փոխհատուցման ենթակա 1 հողակտոր (2 ԱՏՏ) դուրս է եկել օտարման գոտուց, մինչդեռ 2 համայնքային հողակտորների վրա բացահայտվել են 1 վարձակալ և 1 ապօրինի օգտագործող ԱՏՏ-ներ, որոնք ենթակա են փոխհատուցման մշակաբույսերի կորստի համար։ ՎԳՊ իրականացման արդյունքում մշակաբույսերի համար փոխհատուցման ենթակա են 30 ԱՏՏ-ներ (14 մասնավոր հողակտոր 2,370մ² և 2 համայնքային հողակտորներ՝ 1,186մ²)։

Աղյուսակ 5. Ազդեցությունը մշակաբույսերի վրա

| Ցուցանիշը. Ազդեցության ենթակա մշակաբույսեր | a.ՎԳՊ-ով պլանավորված | | | b. Իրականացման արդյունքներ | | | Տարբերություն (b-a) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հող N | Մակերես մ² | ԱՏՏ N | Հող N | Մակերես մ² | ԱՏՏ N | Հող N | Մակերես մ² | ԱՏՏ N |
| Մասնավոր հող | 15 | 2,383 | 30 | 14 | 2,370 | 28 | -1 | -13 | -2 |
| Համայնքից վարձակալված հող | 0 | 0 | 0 | 1 | 224 | 1 | 1 | 224 | 1 |
| Համայնքային հողի ապօրինի օգտագործող | 0 | 0 | 0 | 1 | 962 | 1 | 1 | 962 | 1 |
| Առանց պետ. գրանցման հող | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Հրազդան | 3 | 414 | 7 | 4 | 638 | 8 (a) | 1 | 224 | 1 |
| Գավառ | 0 | 0 | 0 | 1 | 962 | 1 (b) | 1 | 962 | 1 |
| Դդմաշեն | 3 | 449 | 8 | 2 | 436 | 6 | -1 | -13 | -2 |
| Ծաղկունք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Գեղամավան | 3 | 545 | 7 | 3 | 545 | 7 | 0 | 0 | 0 |
| Ծովազարդ | 3 | 553 | 4 | 3 | 553 | 4 | 0 | 0 | 0 |
| Լճափ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Բերդկունք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Հայրավանք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Լճաշեն | 2 | 292 | 2 | 2 | 292 | 2 | 0 | 0 | 0 |
| Չկալովկա | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Նորատուս | 1 | 131 | 2 | 1 | 131 | 2 | 0 | 0 | 0 |
| Գարի | 5 | 741 | 11 | 6 | 1,703 | 12 | 1 | 962 | 1 |
| Կարտոֆիլ | 1 | 57 | 1 | 1 | 57 | 1 | 0 | 0 | 0 |
| Կորնգան | 5 | 905 | 13 | 5 | 1,115 | 12 | 0 | 210 | -1 |
| Ցորեն | 4 | 681 | 5 | 4 | 681 | 5 | 0 | 0 | 0 |
| **Մշակաբույսեր** | 15 | 2,383 | 30 | 16 | 3,556 | 30 (a,b) | 1 | 1,172 | 0 |

Նշում. (a) Առկա է 1 վարձակալ; (b) առկա է 1 չձևակերպված օգտագործող։

**Աղբյուրը՝ 1-ին ենթահատվածի ՎԳՊ և ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ**

Համաձայն ՎԳՊ-ի՝ 1-ին ենթահատվածում սոցիալապես խոցելի ԱՏՏ-ները 24-ն են։ Իրականացման փուլում խոցելի ԱՏՏ-ների թիվը 1-ով նվազել է և դարձել է 23.

- չի հաստատվել 2 ԱՏՏ-ների խոցելի լինելու կարգավիճակը՝ «Աղքատ ԱՏՏ» (լոտ-կոդ 05-030-0273-0082, Դդմաշեն),
- բացահայտվել է 1 խոցելի ԱՏՏ (05-030-0278-0112 Դդմաշեն), որը սոցիալապես խոցելի լինելու կարգավիճակը՝ «Կնոջ գլխավորած ՏՏ», հաստատող փաստաթուղթը ներկայացրել է Ծրագրի վերջնաժամկետից հետո։

Ճշգրտվել է նաև 2 ԱՏՏ-ների խոցելիության կարգավիճակը (լոտ-կոդ 05-050-0203-0011 Ծովազարդ, լոտ-կոդ 05-030-0273-0082 Դդմաշեն). ՎԳՊ-ում տեխնիկական վրիպման պատճառով

[9] ԲԷՑ-ի կողմից տրամադրված տվյալների բազայում մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը ներկայացված է ըստ ազդեցության ենթակա հողակտորների, արդյունքում ըստ առանձին ՏՏ-ների փոխհատուցման տարանջատումը և մոնիտորինգի իրականացումը հնարավոր չէ։

որպես «Կնոջ գլխավորած ԱՏՏ» հաշվառված ԱՏՏ-ները հանդիսացել են «Աղքատ ԱՏՏ»: Այս ճշգրտումը չի ազդել նպաստառու ԱՏՏ-ների ընդհանուր թվի վրա:

Արտաքին մոնիտորինգը հայտնաբերել է ևս մեկ սոցիալապես խոցելի ԱՏՏ՝ «Աղքատ ԱՏՏ» (լոտ-կոդ 05-040-0253-0088, Լճաշեն):

Արդյունքում, 1-ին ենթահատվածում սոցիալապես խոցելի ԱՏՏ-ների թիվը, որոշ կառուցվածքային փոփոխություններից հետո, մնացել է 24: Բոլոր 24 ԱՏՏ-ները ենթակա են փոխհատուցման սոցիալապես խոցելի լինելու համար՝ ՎԳՊ դրույթներին համապատասխան: Կան նաև այլ ՏՏ-ներ, որոնք թեև իրենց համարում են աղքատ և խոցելի, սակայն չեն համապատասխանում ընտանեկան նպաստի համակարգի շահառու համարվելու պահանջներին:

Համաձայն ՎԳՊ-ի՝ 1-ին ենթահատվածում Ծրագրի խիստ կամ զգալի ազդեցությանը ենթարկվել են 2 ԱՏՏ-ներ (1 հողակտոր): Իրականացման ցուցանիշները չեն փոփոխվել, 2 ԱՏՏ-ները պետք է ստանան խիստ ազդեցության նպաստ ՎԳՊ դրույթներին համապատասխան:

**Աղյուսակ 6. ԱՏՏ-ները 1-ին ենթահատվածում**

| | Համայնք | Ընդամենը ԱՏՏ * | Հողի սեփակա-նատեր ԱՏՏ | ա/թ վարձակալ ԱՏՏ | ա/թ ապօրինի օգտագործող ԱՏՏ | Խիստ ԱՏՏ | Խոցելի ԱՏՏ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հրազդան | 19 | 18 | 1 | - | 2 | 8 |
| 2 | Գավառ | 1 | - | - | 1 | - | - |
| 3 | Դդմաշեն | 14 | 14 | - | - | - | 3 |
| 4 | Ծաղկունք | 4 | 4 | - | - | - | 2 |
| 5 | Գեղամավան | 17 | 17 | - | - | - | 4 |
| 6 | Ծովազարդ | 7 | 7 | - | - | - | 1 |
| 7 | Լճափ | 2 | 2 | - | - | - | - |
| 8 | Բերդկունք | 4 | 4 | - | - | - | 3 |
| 9 | Հայրավանք | - | - | - | - | - | - |
| 10 | Լճաշեն | 7 | 7 | - | - | - | 2 |
| 11 | Չկալովկա | 1 | 1 | - | - | - | - |
| 12 | Նորատուս | 17 | 17 | - | - | - | 1 |
| | **Ընդամենը** | 93 | 91 | 1 | 1 | 2 | 24 |

Նշում. * առանց կրկնահաշվարկի:

**Աղբյուրը՝ 1-ին ենթահատվածի ՎԳՊ և ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ**

1-ին ենթահատվածում չկան բիզնեսի, զբաղվածության կորստի, շենքերի, շինությունների օտարման, ծառերի կորստի, ինչպես նաև ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր:

Այսպիսով, 1-ին ենթահատվածի ԱՏՏ-ների ընդհանուր թիվը կազմել է 93, որոնցից 91-ը հողի սեփականատերեր են, 1-ը՝ համայնքային հողի վարձակալ (մինչև 25 տարի վարձակալության ժամկետով) և 1-ը՝ համայնքային հողի չձևակերպված օգտագործող (մինչև 15 տարի օգտագործման ժամկետով): 91 սեփականատերերից 23-ը նաև խոցելի են: Խոցելի ԱՏՏ-ներից 2-ը ենթարկվել են Ծրագրի խիստ ազդեցության:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*Ծրագիրն ազդել է 11 համայնքների 45 մասնավոր հողակտորների, վարձակալվող 1 համայնքային հողակտորի և ապօրինի օգտագործվող 1 համայնքային հողակտորի վրա: Ազդեցության ենթակա տնային տնտեսությունները 93-ն են, որոնցից 24-ը խոցելի են: Խոցելի ԱՏՏ-ներից 2-ը ենթարկվել են Ծրագրի խիստ ազդեցության:*

*Բիզնեսի, զբաղվածության կորստի, շենքերի, շինությունների օտարման, ծառերի կորստի, ինչպես նաև ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր չկան:*

# VI. Տրամադրված փոխհատուցման գնահատումը

## Փոխհատուցումը հողի մշտական կորստի դիմաց

ՎԳՊ-ի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի դիմաց փոխհատուցումը կարող է կատարվել.

(1) որպես դրամական փոխհատուցում, որը հաշվարկվում է հողի շուկայական կամ կադաստրային արժեքներից առավել բարձրին գումարելով դրա 15 տոկոսը[10],

(2) հողի շուկայի բացակայության դեպքում որպես դրամական փոխհատուցում, որը հաշվարկվում է նույն համայնքում ԱԵԱ-ի համար ընդունելի հողակտորի արժեքին գումարելով դրա 15 տոկոսը,

(3) նույն համայնքում տրամադրելով ԱԵԱ-ի համար ընդունելի հողակտոր, որն իր արժեքով, արտադրողականությամբ համարժեք է ազդեցության ենթակա հողակտորին:

Փոխհատուցման միավոր դրույքաչափերը գնահատվել են հավատարմագրված անկախ գնահատողի կողմից՝ հիմնվելով ՀԲ համար ընդունելի մեթոդաբանության վրա:

ՎԳՊ իրականացման արդյունքների համաձայն՝ ազդեցության է ենթարկվել 45 (14,775մ$^2$) մասնավոր հողակտոր: Համապատասխանության հաշվետվության պատրաստման դրությամբ մասնավոր 45 հողակտորից փաստացի օտարվել է 42-ը: 422մ$^2$ մակերեսով 3 մասնավոր հողակտորի օտարման գործընթացը հնարավոր չի եղել ավարտել՝ սեփականատերերի օրինական ժառանգների որոշման պատճառով: Խնդիրը քննվում է համապատասխան դատական գործընթացներով, որի արդյունքում կորոշվեն ժառանգները և ըստ այդմ տեղի կունենա հողի օտարումը: Այնուհանդերձ, ԲԷՑ-ը, սահմանված կարգով, նշված հողակտորների դիմաց փոխհատուցման ենթակա գումարը փոխանցել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դեպոզիտային հաշվին (Հրազդան համայնք, լոտ-կոդ 07-001-0924-0049, 1 ԱՏՏ, 16,562 դրամ; Նորատուս համայնք, լոտ-կոդ 05-071-0219-0111, 2 ԱՏՏ, 39,200 դրամ և լոտ-կոդ 05-071-0238-0051, 3 ԱՏՏ, 67,387 դրամ): Ճանաչված ժառանգները հնարավորություն կունենան ստանալ հողի դիմաց փոխհատուցումը՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն: Փոխհատուցումը ներառում է հողի շուկայական արժեքը՝ գումարելով դրա 15 տոկոսը և համապատասխանում է ՎԳՊ դրույթներին:

Այսպիսով, թեև փոխհատուցման գործընթացը հողի մշտական կորստի դիմաց չի ավարտվել, սակայն ՎԳՊ իրականացումը այս մասով կարելի համարել պատշաճ կատարված՝ քանի որ դատարանի դեպոզոտային հաշվին, ի օգուտ ազդեցության ենթակա անձանց, կատարվել է համապատասխան գումարի փոխանցում: Տե՛ս Հավելված Գ «ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման մասին»:

Փոխհատուցված բոլոր հողակտորների փոխհատուցման հաշարկը համապատասխանում է ՎԳՊ դրույթներին:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*1-ին ենթահատվածում 42 մասնավոր հողակտորների օտարման գործընթացը լիարժեքորեն ավարտվել է, իսկ 3-ինը՝ կարելի է համարել ավարտված: Արդյունքում, 87 ԱՏՏ-ները փոխհատուցվել*

[10] ՎԳՊ համաձայն փոխհատուցումը ազատված է գործարքային պահումներից և գրանցման ծախսերից (տե՛ս 1-ին ենթահատվածի ՎԳՊ ենթակետ 94):

*են ՎԳՊ համապատասխան: Մնացած 3 մասնավոր հողակտորների դիմաց 6 ԱՏՏ-ների փաստացի փոխհատուցումը տեղի կունենա Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռից հետո՝ երբ կպարզվեն հողի սեփականատիրոջ օրինական ժառանգները: ԲԷՑ-ը դատարանի դեպոզիտային հաշվին փոխանցել է տվյալ հողերի համար ՎԳՊ-ով հաստատված փոխհատուցմանը համարժեք գումարի վճարում:*

## Փոխհատուցումը մշակաբույսերի դիմաց

Մշակաբույսերի դիմաց դրամական փոխհատուցումը հաշվարկվել է բերքի 1 տարվա զուտ շուկայական արժեքին համապատասխան: Միավոր դրույքաչափը որոշվել է հիմք ընդունելով հիմնական մշակաբույսերի բերքատվությունը և գները 2014 թվականի ընթացքում:

ՎԳՊ իրականացման փուլի արդյունքներով 16 հողակտորներից (3,556մ²) մշակաբույսերի կորստի համար փոխհատուցման ենթակա ԱՏՏ-ները 30 են[11]:

30 ԱՏՏ-ներից ՎԳՊ դրույթների համապատասխան չի փոխհատուցվել 1 ԱՏՏ-ն (1 հողակտոր, 57 մ²): Հրազդանի 07-001-0924-0049 լոտ-կոդով մասնավոր հողակտորի օտարումը դեռևս ամբողջությամբ չի ավարտվել՝ օրինական ժառանգների որոշման հետ կապված և խնդիրը քննվում է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում (տե՛ս նաև «Փոխհատուցումը հողի մշտական կորստի դիմաց» ենթաբաժինը): ՀՀ օրենսդրությամբ մշակաբույսերի դիմաց փոխհատուցում նախատեսված չ: Ուստի մշակաբույսերի համար փոխհատուցումը չի փոխանցվել դատարանի դեպոզիտ հաշվին: Բայցեւայնպես, ԲԷՑ-ը պարտավորվել է դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո 3 օրյա ժամկետում կատարել 19,391 դրամ մշակաբույսի դիմաց փոխհատուցման վճարումը: Դրա համար հիմք է հանդիսանում ԲԷՑ-ի ղեկավարության համապատասխան գրությունը (տե՛ս Հավելված Ե. «ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում մշակաբույսերի փոխհատուցման վերաբերյալ»):

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման ընթացքում մշակաբույսերի կորստի դիմաց 16 հողակտորիներից 15-ը (29 ԱՏՏ) փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան: Չի փոխհատուցվել 1 հողակտոր (1 ԱՏՏ), որի օտարումը կարգավորվում է դատական կարգով: ԲԷՑ-ը պարտավորվում է դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո 3 օրյա ժամկետում կատարել մշակաբույսի դիմաց փոխհատուցման վճարումը: 19,391 դրամ մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը վճարելուց հետո 1-ին ենթահատվածում Ծրագրի մշակաբույսերի դիմաց փոխհատուցումը կհամապատասխանի ՎԳՊ-ին:*

## Փոխհատուցումը վարձակալների համար

ՎԳՊ-ով սահմանված իրավունքներին համապատասխան՝ վարձակալի փոխհատուցումը հաշվարկվել է ազդեցության ենթակա հողի շուկայական արժեքով գումարված 15 տոկոս՝ հաշվի առնելով վարձակալության մնացած տարիների թիվը (տե՛ս աղյուսակ 2):

ՎԳՊ-ով 1-ին հատվածում հողի վարձակալության դեպքեր չեն հայտնաբերվել: Իրականացման փուլում 1 ԱՏՏ դասակարգվել է որպես համայնքային հողի վարձակալ (լոտ-կոդ 07-001-0883-0003,

[11] Հողակտորների թվի նկատմամբ փոխհատուցման ենթակա ԱՏՏ-ների թվի գերազանցումը բացատրվում է նրանով, որ որոշ ԱՏՏ-ներ հանդիսացել են ակտիվների համատեղ սեփականատերեր:

Հրազդան): Այս ԱՏՏ-ն մոտ 25 տարի վարձակալել է հողակտորը գյուղատնտեսական նպատակներով: Վարձակալ ԱՏՏ-ն փոխհատուցվել է:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*Վարձակալ ԱՏՏ-ն փոխհատուցվել է ՎԳՊ դրույթներին համապատասխան:*

## Փոխհատուցումը չձևակերպված օգտագործողների համար

ՎԳՊ-ով սահմանված իրավունքներին համապատասխան չձևակերպված օգտագործողի փոխհատուցումը հաշվարկվում է ազդեցության ենթակա հողի շուկայական արժեքով՝ հաշվի առնելով հողի օգտագործման անցած տարիների թիվը (տե՛ս աղյուսակ 2): Չձևակերպված օգտագործողի փոխհատուցումը ներառում է նաև մշակաբույսերի կորուստը:

ՎԳՊ-ով 1-ին հատվածում հողի ապօրինի օգտագործման դեպքեր չեն հայտնաբերվել: Իրականացման փուլում 1 ԱՏՏ դասակարգվել է որպես համայնքային հողի չձևակերպված օգտագործող (լոտ-կոդ 05-001-1134-0001, Գավառ): Այս ԱՏՏ-ն մինչև 15 տարի օգտագործել է հողակտորը գյուղատնտեսական նպատակներով: ՎԳՊ իրականացման ընթացքում չձևակերպված օգտագործողը փոխհատուցվել է:

***<u>Հիմնական բացահայտումներ</u>***

*ՎԳՊ իրականացման ընթացքում չձևակերպված օգտագործողը փոխհատուցվել է ՎԳՊ դրույթներին համապատասխան:*

## Փոխհատուցումը սոցիալապես խոցելի խմբերի համար

1-ին ենթահատվածում սոցիալապես խոցելի լինելու կարգավիճակ ունեցող 23 ԱՏՏ-ները փոխհատուցվել են իրականացման փուլում՝ ՎԳՊ դրույթներին համապատասխան:

Արտաքին մոնիտորինգը բացահայտել է ևս 1 աղքատ ԱՏՏ: Վերջինիս համար հիմք է ծառայել ընտանեկան նպաստի համակարգի պաշտոնական տվյալների բազայի ուսումնասիրությունը և տվյալ ԱՏՏ-ի հետ անհատական հարցումները: Ճշգրտող միջոցառումների արդյունքում այս ԱՏՏ-ն փոխհատուցվել է:

**Աղյուսակ 7. Նպաստները սոցիալապես խոցելի ԱՏՏ-ների համար 1-ին ենթահատվածում**

| **Ցուցանիշը. խոցելիություն** | **Աղքատ ԱՏՏ,** N | **Կնոջ գլխավորած ԱՏՏ**[12], N | **Տարեցի գլխավորած ԱՏՏ**[13], N | **Ընդամենը խոցելի ԱՏՏ-ներ,** N | **Փոխհատուցում, դրամ** |
|---|---|---|---|---|---|
| a. ՎԳՊ-ով պլանավորված | 13 | 10 | 3 | 24 | 7,200,000 |
| a.1. ճշգրտված տվյալներ | 17 | 6 | 3 | 24 | 7,200,000 |
| b. Իրականացման արդյունքներ | 15 | 7 | 3 | 23 | 6,900,000 |
| b.1. Ճշգրտող միջոցառումներ | 1 | 0 | 0 | 1 | 300,000 |
| **Տարբերություն** (b+b.1-a.1) | -1 | 1 | 0 | 0 | 0 |

**Աղբյուրը՝ 1-ին ենթահատվածի ՎԳՊ և ՏՋՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ**

Եվս 2 ԱՏՏ-ներ իրենց աղքատ են համարել, սակայն ընտանեկան նպաստների համակարգի շահառու չեն:

[12] «Կնոջ գլխավորած ԱՏՏ»-ներից մեկը նաև «Աղքատ ԱՏՏ» է:
[13] «Տարեցի գլխավորած ԱՏՏ»-ներից մեկը նաև «Կնոջ գլխավորած» ԱՏՏ է:

Այսպիսով, բոլոր իրավասու խոցելի ԱՏՏ-ները ստացել են փոխհատուցումը

***Հիմնական բացահայտումներ***

*1-ին ենթահատվածում սոցիալապես խոցելի բոլոր 24 ԱՏՏ-ները փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան:*

## Փոխհատուցումը «խիստ ազդեցության» համար

ՎԳՊ-ով վերականգնողական միջոցառումներ են նախատեսված Ծրագրի խիստ կամ զգալի ազդեցության դեպքում: Խիստ ազդեցության ենթարկված 2 ԱՏՏ-ները փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան:

Աղյուսակ 8. Նպաստը Ծրագրի խիստ ազդեցության ենթարկված ԱՏՏ-ների համար 1-ին ենթահատվածում

| Ցուցանիշը. Խիստ ազդեցություն | Հող N | Մակերես մ$^2$ | ԱՏՏ N | Նպաստ դրամ |
|---|---|---|---|---|
| Հրազդան<br>Լոտ-կոդ 07-001-0923-0027 | 1 | 117 | 2 | 6,291 |
| **Ընդամենը 1-ին ենթահատված** | 1 | 117 | 2 | 6,291 |

Աղբյուրը՝ ՏԶՀԿ, Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

***Հիմնական բացահայտումներ***

*1-ին ենթահատվածում կան Ծրագրի խիստ ազդեցության ենթարկված 2 ԱՏՏ-ներ, որոնք փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան:*

# VII. ՎԳՊ իրականացման բյուջեի ամփոփումը

Ստորև աղյուսակ 9-ում ամփոփված են 1-ին ենթահատվածի համար ՎԳՊ իրականացման պլանային և փաստացի բյուջեները:

Արտաքին մոնիտորինգի նախնական արդյունքների համաձայն փոխհատուցման փաստացի ծրագիրը կազմել է 13,125,354 դրամ: Այն ներառում է մասնավոր հողերի մշտական կորստի դիմաց ողջ փոխհատուցումը՝ ներառյալ օտարման գործընթացում գտնվող 3 մասնավոր հողերի փոխհատուցումը, որոնք գտնվում են դատական քննության ընթացքում: Դատական գործընթացի ավարտից հետո ԲԷՑ-ը կկարողանա կատարել մշակաբույսերի կորստի դիմաց 1 ՍՏՏ-ի փոխհատուցման վճարումը՝ 19,391 դրամի չափով:

Այսպիսով, ՎԳՊ հետաձգված իրականացման համար կպահանջվի ևս 19,391 դրամ, որի արդյունքում 1-ին ենթահատվածի ընդհանուր բյուջեն կկազմի 13,144,745 դրամ:

**Աղյուսակ 9. ՎԳՊ իրականացման փաստացի բյուջեն 1-ին ենթահատվածում**

| | **ՎԳՊ** | **Ճշգրտված պլան** | **Փաստացի իրականացում** | **Հետաձգված իրականացում** |
|---|---|---|---|---|
| | a | b | c | d |
| ***Հողակտորների քանակ*** | | | | |
| Մասնավոր հողեր | 49 | 45 | 42 | 3 |
| Համայնքային հողեր | 0 | 2 | 2 | 0 |
| Առանց պետ. գրանցման | 1 | 0 | 0 | 0 |
| Ընդամենը հողակտորներ | 50 | 47 | 44 | 3 |
| Ընդամենը հողատարածք (մ$^2$) | 7,972 | 15,961 | 15,539 | 422 |
| ***Փոխհատուցում, ՀՀ դրամ*** | | | | |
| Մասնավոր հող | 2,328,592 | 4,162,315 | 4,162,315 | 0 |
| Շենքեր և շինություններ | 0 | 0 | 0 | 0 |
| Խոցելիություն | 7,200,000 | 7,200,000 | 7,200,000 | 0 |
| Խիստ ազդեցություն | 6,291 | 6,291 | 6,291 | 0 |
| Վարձակալ (հողի դիմաց) | 0 | 13,074 | 13,074 | 0 |
| Ապօրինի օգտագործող (հողի դիմաց) | 0 | 34,205 | 34,205 | 0 |
| Մշակաբույսեր | 131,507 | 188,439 | 169,048 | 19,391 |
| Ծառեր | 0 | 0 | 0 | 0 |
| Բիզնես | 0 | 0 | 0 | 0 |
| Զբաղվածություն | 0 | 0 | 0 | 0 |
| Լիազորագրերի փոխհատուցում | 0 | 45,420 | 45,420 | 0 |
| Գրանցման ծառայություն | 1,625,000 | 1,592,500 | 1,495,000 | 0 |
| **Ընդամենը բյուջե** | 11,291,389 | 13,242,245 | 13,125,354 | 19,391 |

**Աղբյուրը՝ 1-ին ենթահատվածի ՎԳՊ և ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ**

# VIII. Հանրային գոհունակությունը

Արտաքին մոնիտորինգի ընթացքում, նախօրոք մշակված հարցաթերթի հիման վրա 1-ին ենթահատվածի բոլոր ԱՏՏ-ների 97 տոկոսի հետ իրականացվել են կառուցվածքային հարցազրույցներ: Ստացված տվյալները համեմատվել են գրասենյակային վերլուծության արդյունքների հետ, առանձին դեպքերում կապ է վերահաստատվել ԱՏՏ-ների, ՏԻՄ ներկայացուցիչների և Իրականացնող միավորի ներկայացուցիչների հետ՝ տվյալների և տեղեկատվության ստուգման և փոխստուգման համար: Հարցազրույցները թույլ են տալիս նաև ընդհանուր պատկերացում կազմել ՎԳՊ գործընթացից ԱՏՏ-ների գոհունակության մասին:

Հետազոտության համաձայն ԱՏՏ-ների 32 տոկոսը տեղյակ չի եղել իրենց համայնքում կազմակերպված հանրային լսումների և խորհրդատվությունների վերաբերյալ[14]: Տեղյակ ԱՏՏ-ների 82 տոկոսը մասնակցել է հանրային լսումներին, իսկ 18 տոկոսը նշել է, որ չի մասնակցել: Արդյունքում, հանրային լսումներին մասնակցած ԱՏՏ-ների 36 տոկոսը գործընթացը համարել է օգտակար, 39 տոկոսը՝ ոչ այնքան օգտակար, 18 տոկոսը դժվարացել է պատասխանել: ԱՏՏ-ների 7 տոկոսը հանրային լսումների և խորհրդատվությունների գործընթացը օգտակար չի համարել: ԱԵՏՏ-ների նման գնահատականները կարող են վկայել հանրային իրազեկման ցածր արդյունավետության մասին, որը կարող է բարելավվել միայն լրացուցիչ ջանքերի ներդրման դեպքում:

**Գծապատկեր 1. Հանրային լսումների, խորհրդատվությունների գնահատականը**

| **Ձեր ՏՏ անդամներից որևէ մեկը մասնակցե՞լ է կազմակերպված հանրային լսումներին, խորհրդատվություններին** | **Արդյո՞ք հանրային լսումների, խորհրդատվությունների գործընթացը համարում եք օգտակար** |
|---|---|
|   |   |

**Աղբյուրը՝ ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ**

ԱՏՏ-ների 97 տոկոսը նշել են, որ պաշտոնապես ծանուցվել են փոխհատուցման ծավալների և սկզբունքների վերաբերյալ: Չնայած պաշտոնական ծանուցման փուլում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ ներառյալ նկարագրության արձանագրությունները, փոստով ուղարկվել են սեփականատերերին, այնուամենայնիվ, ԱՏՏ-ների միայն 96 տոկոսն է նշել, որ իրենց տրամադրվել

[14] ՏԶՀԿ-ն պարզապես արձանագրել է այն ԱՏՏ-ների քանակը, որոնք տեղեկացված չեն եղել, որևէ այլ գնահատական այս կապակցությամբ չկա: Համաձայն ԲԵՑ-ի մեկնաբանությունների, բոլոր ԱՏՏ-ները նախապես հեռախոսային զանգերի միջոցով տեղեկացվել են հանրային իրազեկման միջոցառումների տեղի և ժամանակի մասին: Ի լրումն՝ ՀՔ իրականացման մասին հայտարարությունը հանդիպումից մեկ շաբաթ առաջ էլեկտրոնային փոստով ուղարկվել է ՏԻՄ-երին, փակցվել է յուրաքանչյուր համայնքի հայտարարությունների ցուցանակում:

են չափագրման և տեղազննման վերաբերյալ փաստաթղթերը (նկարագրության արձանագրություն, քարտեզ և այլն):

Գծապատկեր 2. Իրազեկման և ծանուցման գործընթացը




Աղբյուրը՝ ՏՁՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

ԱՏՏ-ների 99 տոկոսը նշել է, որ համաձայն են Նկարագրության արձանագրության մեջ նշված հողատարածքների չափագրման և տեղազննման տվյալների հետ: Մշակաբույսերին վերաբերող տվյալների հետ համաձայն են ԱՏՏ-ների 81 տոկոսը:

Գծապատկեր 3. Նկարագրության արձանագրության մեջ նշված չափագրման և տեղազննման տվյալների հետ համաձայնությունը




Աղբյուրը՝ ՏՁՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

ՎԳՊ իրականացման տարբեր գործընթացների նկատմամբ ԱՏՏ-ների գոհունակության սուբյեկտիվ գնահատականները բերված են աղյուսակ 1-ում: Հիմնական դժգոհությունները վերաբերում են հողի արժեքի գնահատմանը և փոխհատուցման մեծությանը:

Չափագրման և նկարագրության արձանագրության կազմման գործընթացից դժգոհ կամ շատ դժգոհ են ԱՏՏ-ների 11.3 տոկոսը: Վճարման գործընթացից դժգոհ կամ շատ դժգոհ են ԱՏՏ-ների

9.9 տոկոսը, իսկ մշակաբույսերի արժեքի գնահատումից և Ծրագրի կառավարման ու կազմակերպման մակարդակից՝ 9.5 տոկոսը:

Այսպիսով, ՎԳՊ իրականացումից ԱՏՏ-ների գոհունակության մակարդակը ցածր չէ:

Աղյուսակ 10.ՎԳՊ իրականացման գործընթացներից ԱՏՏ-ների գոհունակությունը

| | Լիովին գոհ | Մասամբ գոհ | Ոչ այնքան գոհ | Դժգոհ | Շատ դժգոհ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 1) Չափագրման և նկարագրության արձանագրության կազմման գործընթաց | 38.7% | 35.5% | 14.5% | 8.1% | 3.2% | 100.0% |
| 2) Հողի արժեքի գնահատում | 37.1% | 33.9% | 12.9% | 12.9% | 3.2% | 100.0% |
| 3) Լրացուցիչ փոխհատուցման չափից (բերք, ծառ, նպաստ) | 31.0% | 45.2% | 14.3% | 7.1% | 2.4% | 100.0% |
| 4) Փոխհատուցման ընդհանուր չափ | 37.1% | 33.9% | 14.5% | 12.9% | 1.6% | 100.0% |
| 5) Վճարման գործընթաց | 44.3% | 32.8% | 13.1% | 6.6% | 3.3% | 100.0% |
| 6) Ծրագրի կառավարման և կազմակերպման մակարդակ | 46.0% | 31.7% | 12.7% | 6.3% | 3.2% | 100.0% |

Աղբյուրը՝ ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Արդյունքում, ՎԳՊ իրականացման գործընթացի վերաբերյալ բողոքներ կամ առարկություններ ունեն ԱՏՏ-ների 6 տոկոսը, որոնք իրենց բողոքը գրավոր չեն ներկայացրել:

Գծապատկեր 4. ՎԳՊ իրականացման գործընթացների հետ անհամաձայնությունների կամ բողոքների առկայություն




Աղբյուրը՝ ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Գրավոր կերպով բողոքներ չներկայացնելու և սահմանված բողոքարկման ֆորմալ ինստիտուտներից չօգտվելու հիմնական պատճառը վստահության պակասն է (50 տոկոս):

Աղյուսակ 11. Գրավոր կերպով չբողոքարկելու պատճառները (անհամաձայնությունների դեպքում)

| | |
|---|---|
| 1) Չեմ վստահում բողոքարկման ընթացակարգին | 50.0% |
| 2) Բողոքարկման ընթացակարգը շատ բարդ է | 0.0% |
| 3) Ընթացակարգից տեղյակ չեմ, չգիտեմ ինչպես և որտեղ բողոքարկել | 25.0% |
| 4) Կարծում եմ գործընթացը կոռումպացված է | 0.0% |
| 5) Ստիպել են չբողոքել | 0.0% |
| 6) Այլ պատճառ | 25.0% |

Աղբյուրը՝ ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Բողոքները կամ առարկությունները հիմնականում վերաբերվել են սոցիալապես խոցելիության սուբյեկտիվ գնահատականների հիման վրա նպաստների տրամադրման պահանջին:

Աղյուսակ 12. Բողոքի, անհամաձայնության պատճառը

| | |
|---|---|
| 1. Օտարվող հողակտորի չափագրման տվյալները | 25.0% |
| 2. Հողակտորի դիմաց փոխհատուցման գումարը | 25.0% |
| 3. Մշակաբույսերի դիմաց փոխհատուցման գումարը | 0.0% |
| 4. Իրավունքների վերաբերյալ ոչ բավարար կամ թերի տեղեկատվությունը | 50.0% |
| 5. Ընդհանուր փոխհատուցման հաշվարկի սխալ | 0.0% |
| 6. Այլ պատճառ | 0.0% |

Աղբյուրը՝ ՏԶՀԿ Արտաքին մոնիտորինգի արդյունքներ

Բողոքները կամ առարկությունները ներկայացվել կամ քննարկվել են ԲԷՑ ներկայացուցիչների հետ: Չնայած ԱՏՏ-ների գոհունակությունը, ընդհանուր առմամբ, ցածր է իրենց կողմից բանավոր ներկայացված բողոքների նկատմամբ արձագանքից, սակայն պետք է նկատել, որ բողոքներ ունեցող ԱՏՏ-ների պահանջները գերազանցապես հիմնված են իրենց ՏՏ սոցիալական կարգավիճակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականների վրա, որոնք չեն համապատասխանում ՎԳՊ դրույթներին:

***Հիմնական բացահայտումներ***

*1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման գործընթացների նկատմամբ գոհունակության մակարդակը համեմատաբար բարձր է:*

*ԱՏՏ-ների դժգոհությունները հիմնականում վերաբերում են սոցիալապես խոցելիության սուբյեկտիվ գնահատականների հիման վրա նպաստների տրամադրման պահանջին, որը չի համապատասխանում ՎԳՊ դրույթներին:*

# IX. Եզրակացություններ և առաջարկություններ

1. 1-ին ենթահատվածում Ծրագիրն ազդել է 11 համայնքների 45 մասնավոր հողակտորների (14,775մ$^2$), վարձակալվող 1 համայնքային հողակտորի (224մ$^2$) և ապօրինի օգտագործվող 1 համայնքային հողակտորի վրա (962մ$^2$): Արդյունքում կան 91 ազդակիր սեփականատեր տնային տնտեսություններ, համայնքային հողի 1 վարձակալ ԱՏՏ և համայնքային հողի 1 ապօրինի (չձևակերպված) օգտագործող ԱՏՏ:
2. 42 մասնավոր հողակտորների օտարման և փոխհատուցման գործընթացն լիարժեք ավարտվել է: 3 մասնավոր հողակտորների օտարումը դեռևս չի ավարտվել, քանի որ դրանց օրինական սեփականատերերը պետք է որոշվեն համապատասխան դատական քննության ավարտից հետո: Այնուհանդերձ, ԲԷՑ-ը դատարանի դեպոզիտային հաշվին է փոխանցել տվյալ հողակտորների դիմաց ՎԳՊ-ով նախատեսված դրույքաչափերին համաձայն հաշվարկված փոխհատուցման ենթակա գումարը: Արդյունքում, դատարանի վճռից հետո, օրինական սեփականատերերը կարող են ավարտել օտարման գործընթացը և ստանալ համապատասխան գումարը: Այսպիսով, չնայած նշված իրողությանը, փոխհատուցման Ծրագիրը մասնավոր հողերի մշտական կորստի մասով կարելի է համարել ամբողջությամբ ավարտված, քանի որ 91 ԱՏՏ-ներից 87-ը փաստացի ստացել են փոխհատուցումը, իսկ 6-ը կարող են ստանալ փոխհատուցումը՝ իրենց իրավունքները օրինական ճանաչվելուց հետո:
3. Վարձակալ 1 ԱՏՏ-ն և ապօրինի օգտագործող 1 ԱՏՏ-ն փոխհատուցվել են:
4. Մշակաբույսերի կորստի համար փոխհատուցման ենթակա 30 ԱՏՏ-ներից 29-ը ստացել են փոխհատուցումը` համապատասխան ՎԳՊ-ին: Չի փոխհատուցվել 1 ԱՏՏ, որի սեփականության իրավունքը օրինական կճանաչվի դատարանի կողմից օրինական ժառանգի որոշումից հետո (տե՛ս 2-րդ ենթակետը): ԲԷՑ-ը պարտավորվում է դատարանի որոշման ուժի մեջ մտնելուց հետո 3 օրյա ժամկետում կատարել մշակաբույսի դիմաց փոխհատուցման վճարումը:
5. Սոցիալապես խոցելի բոլոր 24 ԱՏՏ-ները փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան:
6. 1-ին ենթահատվածում կան Ծրագրի խիստ ազդեցության ենթարկված 2 ԱՏՏ-ներ, որոնք փոխհատուցվել են ՎԳՊ դրույթներին համապատասխան:
7. 1-ին ենթահատվածում չկան բիզնեսի, աշխատատեղի, շենքերի և շինությունների, ծառերի կորստի և ֆիզիկական վերաբնակեցման դեպքեր:
8. ՎԳՊ իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքը և կառավարումն համապատասխանում են ՎԳՊ դրույթներին: Ծրագրի կառավարման և կազմակերպման մակարդակից ԱՏՏ-ների գոհունակությունը բարձր է:
9. Հանրային իրազեկման և խորհրդատվության գործընթացները համապատասխանել են նախատեսվածին: Հանրային լսումներին մասնկցած ԱՏՏ-ների 36 տոկոսը այս գործընթացը համարել է օգտակար, 39 տոկոսը՝ ոչ այնքան օգտակար, 7 տոկոսը` ոչ օգտակար, իսկ 18 տոկոսը դժվարացել է պատասխանել:
10. Բողոքարկման մեխանիզմները և Բողոքների կարգավորման հանձնաժողովը գործում է: 1-ին ենթահատվածում ստացվել են 18 գրավոր բողոք/դիմումներ և 8 հարցադրումներ: Դրանք համապատասխանաբար հասցեագրվել են և լուծվել ի օգուտ ԱՏՏ-ների և համապատասխան ՎԳՊ դրույթներին:

11. Ընդհանուր առմամբ, ՎԳՊ իրականացման գործընթացների նկատմամբ ԱՏՏ-ների գոհունակության մակարդակը ենթահատված 1-ում բարձր է: Դժգոհությունները վերաբերում են հողի արժեքի գնահատմանը (դժգոհ են ԱՏՏ-ների 16.1 տոկոսը) և ընդհանուր փոխհատուցման չափին (դժգոհ են ԱՏՏ-ների 14.5 տոկոսը): Առկա են նաև սոցիալական կարգավիճակի դիմաց չփոխհատուցման դժգոհություններ: Դժգոհությունները հիմնված են սուբյեկտիվ գնահատականների վրա և չեն համապատասխանում ՎԳՊ դրույթներին:

12. Ներկայացված ազդեցության շրջանակը չի ներառում գյուղատնտեսական եկամտի հավանական ժամանակավոր կորուստը՝ կապված շինարարական աշխատանքների ընթացքում մոտեցման ճանապարհների հետ: Ներկայում տեխնիկապես հնարավոր չէ հստակորեն որոշել այս ազդեցության չափը ողջ 1-ին ենթահատվածի համար: Դա ենթակա է կարգավորման 2015-ի մարտի 20-ին ԲԷՑ-ի կողմից հաստատված ՕԳ-ի հենարանների կառուցման նպատակով մոտեցման ճանապարհների ընտրության կարգով:

13. Դասեր քաղելով 5-րդ, 2-րդ, նաև 1-ին ենթահատվածների իրականացման փորձից, հաջորդ ենթահատվածներում Փոխհատուցման ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու համար շարունակում են կարևորվել հետևյալ առաջարկությունները.

- Հանրային իրազեկման և խորհրդատվության գործընթացի վրա առավել մեծ ջանքեր ներդնել և ընդլայնել ՀԿ-ների դերը,
- Տեղեկցվածության և վստահելիության մակարդակը բարձրացնելու համար, Ծրագրային թիմը պետք է շահագրգռի ԱԵԱ-ներին, անհամաձայնությունների կամ հարցերի դեպքում, դիմել բողոքարկման գոյություն ունեցող մեխանիզմին,
- Կատարելագործել ազդեցության գոտու բնութագրիչները ներկայացնող տվյալների բազաների կառուցվածքը՝ դարձնելով դրանք վերլուծության և համադրումների համար առավել հարմար և ամբողջական,
- Ներքին մոնիտորինգի հաշվետվությունների բովանդակությունը և հաճախականությունը ընդլայնել և առավել մեծ ուշադրության առարկա դարձնել իրականացման գործընթացների մանրամասները, մասնավորապես՝ պայմանագրային գործընթացները,
- Ներքին մոնիտորինգի և վերահսկողության առարկա դարձնել մոտեցման ճանապարհների ընտրության և դրանց արդյունքում հնարավոր ժամանակավոր ազդեցության գործընթացը:

14. Ամփոփելով արտաքին մոնիտորինգի արդյունքները 1-ին ենթահատվածի համար՝ մենք գտնում ենք, որ.

- փոխհատուցման ծրագիրը և իրականացված գործողությունները համապատասխանում են ՎԳՊ-ին և սահմանված քաղաքականության և գործառնական ընթացակարգերին,
- 1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացումն ամբողջությամբ և արդյունավետ կերպով կավարտվի Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռից հետո՝ հնարավոր 1 ԱՏՏ-ին մշակաբույսերի դիմաց փոխհատուցման տրամադրմամբ,
- ԲԷՑ-ը պետք է դատարանի վճռից հետո 3 օրյա ժամկետում հնարավոր 1 ԱՏՏ-ին վճարի 19,391 դրամի մշակաբույսի դիմաց փոխհատուցումը,
- Տվյալ փուլում արդեն իսկ կարելի է մեկնարկել շինարարական աշխատանքները:

# X. Հավելվածներ

## Հավելված Ա. Համապատասխանության գնահատման հետազոտության հարցաթերթ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

**Հարցաթերթի համարը՝**

**Համայնքը** (անվանումը)՝

**Հարցազրուցավարի կոդը՝**

**Հարցազրույցի անցկացման ամսաթիվ՝**

(օր/ամիս/տարի)՝

**ՏՏ հասցե** (տան համար)՝

**ՏՏ սեփականատիրոջ ազգանունը՝**

**Կադաստրային ծածկագիր՝**

**Հ1. Քանի՞ անդամից է բաղկացած Ձեր Տնային տնտեսությունը ________**

**Հ2. Նշեք խնդրեմ Ձեր ՏՏ գլխավորին (ով է կայացնում հիմնական ֆինանսական կամ գույքային որոշումները)**

**Անուն/ազգանուն ____________________________________________**

**Հ3. Արդյոք Ձեր ՏՏ-ն ստանո՞ւմ է ընտանեկան նպաստ.**

1) Այո 2) Ոչ

**Հ4. Արդյոք տեղյա՞կ եք, որ Ձեր գույքը կամ հողը կամ դրա որոշ մասը օտարվել է պետությանը՝ նոր էլէկտրահաղորդակցման բարձրավոլտ գիծ անցկացնելու համար.**

1) Այո 2) Ոչ

**Հ5. Դուք կամ Ձեր ՏՏ որևէ անդամ ստացե՞լ է նամակ կամ պաշտոնական ծանուցում, որում նշված են փոխհատուցման ծավալը և սկզբունքները.**

1) Այո 2) Ոչ

**Հ6. Ձեզ տրամադրվե՞լ են չափագրման և տեղազննման վերաբերյալ փաստաթղթեր՝ նկարագրության արձանագրություն, քարտեզ և այլն.**

1) Այո 2) Ոչ

**Հ7. Նշեք խնդրեմ ծրագրի արդյունքում Ձեր ՏՏ կորուստները, որոնց համար պետք է ստանայիք փոխհատուցում.**

1. Հող
2. Շինություն / կառույց
3. Բիզնես
4. Բերք
5. Ծառեր
6. Խոցելի, խիստ ազդեցության նպաստ
7. Այլ (մանրամասնել)________________________________

**Հ8. Ձեր գնահատմամբ, արդյոք Ձեր ՏՏ-ն կորցրել է իր գյուղ. նշանակության հողի 10%-ից ավելին.**

1) Այո 2) Ոչ

**Հ9. Ի՞նչ եք կարծում, աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր է՝ ունենաք լրացուցիչ կամ ժամանակավոր այլ կորուստներ.**

1) Այո 2) Ոչ 3) ԴՊ

**Հ10. Համաձա՞յն եք նկարագրության արձանագրության մեջ նշված չափագրման և տեղազննման տվյալների հետ.**

| | | | |
|---|---|---|---|
| 1) | Հողակտոր | | **1. Այո**<br><br>**2. Ոչ**<br><br>**98. Կիրառելի չէ** |
| 2) | Ցորեն | | |
| 3) | Գարի | | |
| 4) | Կորնգան | | |
| 5) | Հաճար | | |
| 6) | Բերքատու ծառեր | | |
| 7) | Ոչ բերքատու ծառեր | | |
| 8) | Շինություն / կառույց | | |
| 9) | Այլ կարգի կորուստներ (մանրամասնել) | | |

**Հ11. Դուք կամ Ձեր ՏՏ որևէ անդամ արդեն ստորագրե՞լ եք պայմանագիրը.**

1) Այո
2) Ոչ (նշել պատճառը) ___________________________________________

**Հ12. Արդյո՞ք մինչև պայմանագրի ստորագրումը հնարավորություն ունեցել եք դրանում կատարել ճշգրտումներ՝ բացահայտված սխալների կամ անճշտությունների դեպքում.**

1) Այո 2) Ոչ

**Հ13. Արդյո՞ք արդեն ստացել եք հաշվարկված փոխհատուցումը.**

1) Այո, ստացել եմ _______ ՀՀ դրամ
2) Ոչ, չեմ ստացել (նշել պատճառը) ________________________________________

**Հ14.Գնահատեք խնդրեմ Ձեր ընդհանուր գոհունակությունը, բավարարվածությունը.**

| | **Գոհունակության գնահատականը** | |
|---|---|---|
| 1) Չափագրման և նկարագրության արձանագրության կազմման գործընթացից | | 1. **Լիովին գոհ**<br>2. **Մասամբ գոհ**<br>3. **Ոչ այնքան գոհ**<br>4. **Դժգոհ**<br>5. **Շատ դժգոհ**<br>6. **ԴՊ**<br><br>**98. Կիրառելի չէ** |
| 2) Ակտիվների և ունեցվածքի արժեքի գնահատումից | | |
| 3) Լրացուցիչ փոխհատուցման չափից (բերք, ծառեր և նպաստներ) | | |
| 4) Փոխհատուցման ընդհանուր չափից | | |
| 5) Վճարման գործընթացից | | |
| 6) Ծրագրի կառավարման և կազմակերպման մակարդակից | | |

**Հ15. Ձեր համայնքում կազմակերպվե՞լ են հանրային լսումներ/ խորհրդատվություններ.**

1) Այո 2) Ոչ (անցում Հ18) 3) ԴՊ

**Հ16. Ձեր ՏՏ անդամներից որևէ մեկը մասնակցե՞լ է կազմակերպված հանրային լսումներին/խորհրդատվություններին.**

1) Այո 2) Ոչ 3) ԴՊ

**Հ17. Արդյո՞ք հանրային լսումների/խորհրդատվությունների գործընթացը, ընդհանուր առմամբ, համարում եք օգտակար.**

1. Այո, շատ
2. Այո, բայց ոչ այնքան
3. Ոչ
4. ԴՊ

**Հ18. Ձեզ բացատրվե՞լ է անհամաձայնությունների/բողոքարկման ներկայացման կարգը.**

1) Այո 2) Ոչ

**Հ19. Ձեզ տրամադրվե՞լ են արդյոք բողոքները համակարգող անձի (ԲԷՑ ներկայացուցչի) կոնտակտային տվյալները.**

1) Այո 2) Ոչ

**Հ 19.1** Նշեք խնդրում եմ նրա անուն/ազգանունը՝________________________________

**Հ20. Արդյո՞ք չափագրման, գնահատման, պայմանագրի կազմման կամ փոխհատուցման վճարման գործընթացների հետ կապված Դուք կամ Ձեր ՏՏ որևէ անդամ ունեցել եք անհամաձայնություններ կամ բողոքներ.**

1) Այո 2) Ոչ (Ավարտել հարցումը)

**Հ21. Գրավոր բողոքարկե՞լ եք.**

1) Այո (անցում **Հ23**) 2) Ոչ

**Հ22. Ինչո՞ւ գրավոր կերպով չեք բողոքարկել, եթե ունեք անհամաձայնություններ.**

| | |
|---|---|
| 1) | Ձեմ վստահում բողոքարկման ընթացակարգին |
| 2) | Բողոքարկման ընթացակարգը շատ բարդ է |
| 3) | Բողոքարկման ընթացակարգից տեղյակ չեմ, չգիտեմ ինչպես և որտեղ բողոքարկել |
| 4) | Կարծում եմ՝ գործընթացը կոռումպացված է |
| 5) | Ստիպել են չբողոքել |
| 6) | Այլ պատճառ, *մանրամասնել* |

**Հ23. Ո՞րն էր բողոքի պատճառը.**

| |
|---|
| 1. Օտարվող հողակտորի, շինության / կառույցի **չափագրման տվյալները** |
| 2. Հողակտորի, շինության, բիզնեսի **փոխհատուցման գումարը** |
| 3. Հողակտորից ստացվող բերքի, ծառերի **գնահատումը** |
| 4. **Փոխհատուցման իրավունքների վերաբերյալ ոչ բավարար կամ թերի տեղեկատվությունը** խորհրդատվությունների ժամանակ |
| 5. Ընդհանուր փոխհատուցման **հաշվարկի սխալ** |
| 6. Այլ պատճառ, *մանրամասնել* |

**Հ**24. **Նշեք խնդրեմ ու՞մ եք ներկայացրել Ձեր բողոքը.**

| | |
|---|---|
| 1. | Տեղական ինքնակառավարման մարմին |
| 2. | Բողոքները համակարգող անձ (ԲԷՑ ներկայացուցիչ) |
| 3. | Բողոքները կարգավորող հանձնաժողով (ԲԿՀ) |
| 4. | Դատարան |
| 5. | Այլ մարմին, մանրամասնել՝ |

**Հ**25. **Բավարարել է Ձեզ արդյո՞ք պատասխանը, ձեռնարկված քայլերը**: **Գնահատեք.**

**Նվազագույն** (բոլորովին չի բավարարել) 1……2……3…….4……5 **Առավելագույն** (ամբողջությամբ բավարարել է)

## Հավելված Բ. Ազդեցության ենթակա հողերը և փոխհատուցումը

| N | Համայնք | Կադաստրային ծածկագիր | Հաշվարկված փոխհատուցում | ՏՏ No | Վճարված փոխհատուցում | Վճարման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Հրազդան | 07-001-0923-0027 | 346,612 | 2 | 346,612 | 19/03/15, 30/03/15 |
| 2 | Հրազդան | 07-001-0924-0048 | 936,542 | 5 | 936,542 | 30/03/15 |
| 3 | Հրազդան | 07-001-0924-0049 | 35,953 | 1 | 16,562 | 29/04/15 |
| 4 | Հրազդան | 07-001-0926-0043 | 380,351 | 4 | 380,351 | 30/03/15 |
| 5 | Հրազդան | 07-001-0927-0012 | 970,250 | 4 | 970,250 | 30/03/15 |
| 6 | Հրազդան | 07-001-0927-0041 | 169,906 | 2 | 169,906 | 18/03/15 |
| 7 | Հրազդան | 07-001-0883-0003 | 22,474 | 1 | 22,474 | 16/06/15 |
| 8 | Դդմաշեն | 05-030-0273-0109 | 23,426 | 1 | 23,426 | 30/03/15 |
| 9 | Դդմաշեն | 05-030-0273-0110 | 2,863 | 1 | 2,862 | 27/04/15 |
| 10 | Դդմաշեն | 05-030-0273-0082 | 313,174 | 4 | 313,174 | 30/03/15 |
| 11 | Դդմաշեն | 05-030-0273-0085 | 365,250 | 4 | 365,250 | 30/03/15 |
| 12 | Դդմաշեն | 05-030-0278-0112 | 493,262 | 2 | 493,262 | 30/03/15 |
| 13 | Դդմաշեն | 05-030-0278-0016 | 191,591 | 2 | 191,591 | 22/04/15 |
| 14 | Ծաղկունք | 05-047-0140-0054 | 70,221 | 2 | 70,221 | 30/03/15 |
| 15 | Ծաղկունք | 05-047-0141-0017 | 684,475 | 2 | 684,475 | 30/03/15 |
| 16 | Գեղամավան | 05-024-0269-0061 | 94,312 | 1 | 94,312 | 30/03/15 |
| 17 | Գեղամավան | 05-024-0268-0036 | 221,246 | 1 | 221,246 | 19/03/15 |
| 18 | Գեղամավան | 05-024-0267-0007 | 207,157 | 4 | 207,157 | 17/06/15, 22/05/15 |
| 19 | Գեղամավան | 05-024-0267-0008 | 203,607 | 2 | 203,606 | 22/04/15 |
| 20 | Գեղամավան | 05-024-0264-0061 | 333,212 | 3 | 333,212 | 30/03/15 |
| 21 | Գեղամավան | 05-024-0264-0062 | 346,385 | 2 | 346,385 | 15/14/15 |
| 22 | Գեղամավան | 05-024-0263-0078 | 684,475 | 4 | 684,475 | 30/03/15 |
| 23 | Լճաշեն | 05-040-0227-0021 | 130,694 | 1 | 130,694 | 30/03/15 |
| 24 | Լճաշեն | 05-040-0227-0029 | 900 | 1 | 899 | 17/06/15, 22/04/15 |
| 25 | Լճաշեն | 05-040-0227-0032 | 205,459 | 1 | 205,459 | 30/03/15 |
| 26 | Լճաշեն | 05-040-0244-0027 | 17,146 | 1 | 17,146 | 15/04/15 |
| 27 | Լճաշեն | 05-040-0244-0028 | 465,492 | 2 | 465,492 | 30/03/15 |
| 28 | Լճաշեն | 05-040-0253-0088 | 51,848 | 1 | 51,848 | 30/03/15 |
| 29 | Չկալովկա | 05-075-0111-0016 | 143,786 | 1 | 143,786 | 30/03/15 |
| 30 | Ծովազարդ | 05-050-0203-0049 | 71,932 | 1 | 71,932 | 16/02/15 |
| 31 | Ծովազարդ | 05-050-0203-0011 | 519,510 | 3 | 519,590 | 18/05/15, 30/03/15 |
| 32 | Ծովազարդ | 05-050-0217-0121 | 43,566 | 1 | 43,566 | 30/03/15 |
| 33 | Ծովազարդ | 05-050-0226-0064 | 72,164 | 2 | 72,164 | 30/03/15 |
| 34 | Լճափ | 05-042-0106-0097 | 102,033 | 2 | 102,033 | 30/03/15 |
| 35 | Բերդկունք | 05-020-0104-0026 | 979,597 | 4 | 979,597 | 30/03/15 |
| 36 | Նորատուս | 05-071-0201-0801 | 16,708 | 1 | 16,708 | 30/03/15 |
| 37 | Նորատուս | 05-071-0201-0802 | 17,082 | 1 | 17,082 | 19/03/15 |
| 38 | Նորատուս | 05-071-0211-0017 | 470,040 | 2 | 470,040 | 30/03/15, 17/03/15 |
| 39 | Նորատուս | 05-071-0213-0104 | 82,761 | 2 | 82,761 | 30/03/15 |
| 40 | Նորատուս | 05-071-0219-0111 | 39,200 | 2 | 39,200 | 20/04/15 |
| 41 | Նորատուս | 05-071-0219-0112 | 68,397 | 1 | 68,397 | 30/03/15, 17/03/15 |
| 42 | Նորատուս | 05-071-0220-0050 | 149,429 | 1 | 149,429 | 19/03/15 |
| 43 | Նորատուս | 05-071-0220-0070 | 1,198 | 1 | 1,197 | 22/04/15 |
| 44 | Նորատուս | 05-071-0235-0003 | 208,095 | 1 | 208,095 | 17/03/15 |
| 45 | Նորատուս | 05-071-0238-0050 | 189,975 | 2 | 189,974 | 17/06/15, 30/03/15 |
| 46 | Նորատուս | 05-071-0238-0051 | 67,387 | 3 | 67,387 | 20/14/15 |
| 47 | Գավառ | 05-001-1134-0001 | 82,300 | 1 | 82,300 | 12/05/15 |

## Հավելված Գ. ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում ՎԳՊ իրականացման մասին

Նամակը pdf ֆորմատով ներկայացվում է սույն հաշվետվությանը կից առանձին ֆայլով:

## Հավելված Դ. 1-ին ենթահատվածում բողոքների գրանցման աղյուսակ (անգլերենով)

**TABLE FOR REGISTRATION OF GRIEVANCES**

| Community | Cadastralcode | Date | Subject of the claim | Response |
|---|---|---|---|---|
| Tzovazard | 05-060-0442-0011 | 16.09.2014 | Wants to work in the project, as a driver | Included in the list and the contact information is submitted to KPTL. |
| Noratus | 05-071-0201-0802 | 08.12.2014 | Please explain the compensation calculation method. | Done |
| Geghamavan | 05-024-0268-0036 | 08.12.2014 | Please explain the compensation calculation method. | Done |
| Geghamavan | 05-024-0267-0008 | 22.12.2014 | Please explain the compensation calculation method. | Done |
| Berdkunq | 05-020-0104-0026 | 25.12.2014 | Please explain the compensation calculation method. | Done |
| Ddmashen | 05-030-0278-0112 | 12.01.2015 | How are the vulnerable people identified? | The vulnerable households are defined by the RPF and RAP. The three groups eligible for compensation were introduced |
| Geghamavan | 05-024-0263-0078 | 16.01.2015 | Please explain the compensation calculation method. | Done |
| Tsakhkunk | 05-047-0141-0017 | 03.02.2015 | Please explain the compensation calculation method. | Done |
| Ddmashen | 05-030-0278-0016 | 03.02.2015 | Please take also the part of the land to be taken which is economically and functionaly not viable after the separation. | The applications were reviewed by HVEN and all were found to be justified. APs will be notified of HVENs decision in written form. |
| Ddmashen | 05-030-0278-0112 | 03.02.2015 | | |
| Lchashen | 05-040-0227-0032 | 03.02.2015 | | |
| Lchashen | 05-040-0227-0021 | 03.02.2015 | | |
| Noratus | 05-071-0220-0050 | 23.02.2015 | | |
| Noratus | 05-071-0235-0003 | 23.02.2015 | | |
| Noratus | 05-071-0238-0050 | 23.02.2015 | | |
| Chkalovka | 05-075-0111-0016 | 23.02.2015 | | |
| Hrazdan | 07-001-0927-0041 | 23.02.2015 | | |
| Noratus | 05-071-0201-0802 | 23.02.2015 | | |
| Noratus | 05-071-0211-0017 | 23.02.2015 | | |
| Tzovazard | 05-050-0203-0011 | 23.02.2015 | | |
| Geghamavan | 05-024-0268-0036 | 23.02.2015 | | |
| Lchap | 05-042-0106-0097 | 23.02.2015 | | |
| Noratus | 05-071-0213-0104 | 23.02.2015 | | |
| Lchashen | 05-040-0244-0028 | 23.02.2015 | | |
| Geghamavan | 05-024-0267-0008 | 23.02.2015 | | |
| Geghamavan | 05-024-0267-0007 | 10.05.2015 | | |

Աղբյուրը՝ Հավելված 1, Ներքին մոնիտորինգի ամսական հաշվետվություն N5.

## Հավելված Ե. ԲԷՑ նամակը 1-ին ենթահատվածում մշակաբույսերի փոխհատուցման վերաբերյալ

Նամակը pdf ֆորմատով ներկայացվում է սույն հաշվետվությանը կից առանձին ֆայլով: